

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻՆ (1922-1931)

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՈՍԵԱՆ
varny1@yahoo.com

Հայկազեան Հայագիտական Հանդէսի Ի.Է. հատորին մէջ հրատարակած էինք Կոստան Զարեանի եւ Արշակ Զօպանեանի նամակագրութիւնը¹։ Հոն ակնարկած էինք Զարեանի 1922-1931 չրջանի նամակներուն, որոնց պատասխանները մեզի յայտնի չէին։ Սոյն հրապարակուած լոյսին կը բերէ այդ ինը տարիներու նամակագրութեան ամբողջութիւնը (33 նամակ ու երկտող)։

Վերջերս մեզի յայտնի դարձաւ, որ Երեւանի Եղիշէ Զարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի (ԳԱԹ) ձեռագրական բաժնի նախկին վարիչը՝ այժմ հանգուցեալ Գոհար Ազնաւուրեանը, 1975ին հրատարակած էր ստորեւ հրատարակուող ԺԱ., ԺԴ. ԺԵ., ԺԹ. եւ ԼԲ. նամակները, «նոր» (խորհրդահայ) ուղղագրութեամբ եւ առանց ծանօթագրութիւններու, յապաւումներով ու թիւրընթերցումներով²։ Այս բոլորը սրբագրուած են ներկայ հրապարակումով։ Կը վերահրատարակենք մեր կողմէ նախապէս հրապարակուած ԺԴ., ԺԵ., ԺԶ. նամակները³, բնագրային մանր ճշգրտումներով, շարքին ամբողջութիւնը չխախտելու նպատակով։

Այս շարքը կը ներկայացնէ Զարեանի կեանքէն քանի մը հանգրուաններ։

1922, Պոլիս.- Զարեան՝ գործօն մասնակիցն է գրական նոր շարժում մը յառաջացնելու ճիգերուն, կը բացայայտէ պոլսահայ աննպաստ մթնոլորտը՝ մտաւորական լուրջ աշխատանքներու նկատմամբ։

1924-25, Փարիզ.- Զարեան՝ մէկուկէս տարուան կեցութենէ ետք Հայաստանէն նոր մեկնած, որոշ մանրամասնութիւններ կու տայ իր ժամանումին եւ La Tour de Babel հանդէսի հրատարակութեան մասին։

1929-31, Փարիզ-Վենետիկ.- Ժամանակաւորապէս Փարիզ կեցութենէն ետք, Զարեան, որուն մանչերը Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան Վարժարանը կը յաճախէին, կրկին կը հաստատուի Վենետիկ իր ընտանիքով։ Ան կը բանակցի Զօպանեանի հետ՝ Անահիտի ծրագրուած մատենաշարով հրատարակելու *Երեք Երգեր* վիպերգին հայերէն բնագիրը։ Կարելոր մանրամասնութիւններ կու տայ այդ վիպերգին իտալերէն թարգմանութեան եւ այլ արձագանքներու մասին։ Նաեւ կ'անդրադառնայ Անահիտի վերահրատարակութեան, հայ գրական ու հանրային կեանքին, Հայաստանի իրավիճակին, անձնական կացութեան, ի մասնաւորի՝ աւագ որդիին համալսարանական կրթութեան ի խնդիր կատարած դիմումներուն։

Նամակները պահուած են ԳԱԹի Արշակ Զօպանեանի Ֆոնտի (ԱԶՖ) Ա. բաժնին մէջ։ Նոյնութեամբ կը հրատարակենք զանոնք, պահպանելով Զարեանի լեզուական եւ ուղղագրական կարգ մը առանձնայատկութիւնները (միայն դասական ուղղագրութեան վերածած ենք 1922ի ուղղագրութեամբ գրուած կարգ մը նամակներ)։ Զանազան ենք ժամանակագրական կարգը պահել՝ անթուակիր գրութիւններն ալ տեղադրելով ըստ բովանդակութեան։ Նամակները

օժտած ենք անհրաժեշտ ծանօթագրութիւններով, որքան որ մեր պայմանները
թոյլատրած են մեզի:

Ա.⁴

20 Ապրիլ 1922
Rue Iasmadji Avedis 3,
Scutari

Սիրելի Չօպանեան,

Դրկում եմ ձեզ «Օրերի Պսակը»⁵, որի մէջ տպուած են մաեւ այն ոտա-
նատրները⁶ որ դուք ժամանակին այնքան սիրով հիւրընկալեցիք «Վերա-
ծնունդի» մէջ⁷:

Այստեղ դեռ շատ քիչերը արտայայտուեցան գրքիս մասին. Կավոօշից⁸ եւ
Շաւիղից⁹, այդ մտաւորական պոռնկատուներից գատ¹⁰, Օշականը¹¹ միայն
գրեց¹²: Արդի պայմանների մէջ, երբ լաւագոյնները մերոնցից մեծ մասամբ մե-
ռած են եւ միւսներն էլ հեռու են Պոլսից, ստիպուած ենք ապրիլ անտանելի,
դժնդակ միջավայրի մէջ: Արտասահմանից [յ]ետոյ գալ ընգնել այսպիսի մի
վայր ուր ամենատարրական բաները պէտք է երկարօրէն բացատրել, ուր 20-
30 տարիէ ի վեր ընդունուած ձեւերը լոյսնից եկած տարօրինակութիւնների
տպաւորութիւն են բողոմու, ուր այսպէս ասուած գրագէտները եւ արուեստա-
գէտները տգէտ են վարուների նման — ի՞նչ կ[']ուզէր որ լինի: Այդ ամէնը գրում
եմ ձեզ, որովհետեւ յիշում եմ որ խորհուրդ էիք տալիս ինձ Պարիզ կամ
արտասահման մնալ եւ գրական շարժումը հաւաքաբար այստեղ սկսել:
Իրատւոյն ունէիք...

«Բարձրավանքը»¹³ տեսած էք անշուշտ. նա էլ ընդհանուր տխմարու-
թեան կենդանային ոխն է շարժում միայն... Թէքէեանը¹⁴ կարդաց ինձ ձեր
վերջին նամակներից մէկը ուր փափաք էք յայտնում բոլորովին գրականու-
թեան մոլոր[ո]ւի: Կ'ուզէի ասել ձեզ որ մինչեւ որ բարոյապէս չը կազմակեր-
պուենք երբեք այդ չպիտի լինենք եւ այդ բարոյական միութիւնը միայն ար-
ուեստը եւ գրականութիւնը կարող է առաջ բերել: - Խորապէս համոզուած եմ
դրա մէջ: Ուստի ողջունում եմ ձեր այդ որոշումը:

Տիկին Եսայ[ե]յանի¹⁵ հասցեն չը գիտեմ. թոյլ եմ տալիս ինձ նրան եւս
դրկել մի գիրք ձեր միջոցով - ներեցէք:

Արուեստի Տան¹⁶ մի մասնաճիւղ բանալն էլ շատ լաւ գաղափար է. ահա
վերջապէս մի հող որի վրայ հայ մտաւորականութիւնը կարող է միանալ ա-
ռանց կուսակցութիւնների եւ կազմակերպութիւնների կնիքով:

Մնամ ձեր
Կ. ՋԱՐԵԱՆ

Բ.¹⁷

2-IX-24 (Վենետիկ)

Սիրելի պ[արոն] Չօպանեան,

Ֆրանսական Հիւպատոսարանը յայտնեց ինձ, որ նախարարութիւնից
արտօնութիւն ստացած է visé¹⁸ տալու ինձ¹⁹: Ձեր նամակից հասկացայ, որ
այդ արտօնութիւնը ձեր արած քայլերի արդիւնքն է: Յայտնում եմ ձեզ խորին
շնորհակալութիւն:

Դժբախտաբար Փարիզ գալս մի քիչ պիտի ուշանայ, Փիքումեան²⁰ եւ
Շահվերդեան²¹ պիտի գան այստեղ ամսոյս 9-ին եւ մի քանի հարցերի շուրջ

խորհրդակցութիւն պիտի ունենանք²², կամ կարող է պատահել, որ նախ Վի-
եննա յայտնուենք նրանց հետ: Ուստի ամսոյս 15-20[ից] առաջ դժուար որ
կարողանամ Փարիզ լինել: Ամենայն դէպս գնալուց առաջ կը գրեմ:

Մնամ ձեր
Կ. ՋԱՐԵԱՆ

Գ.²³

[Փարիզ, անթուակիր]

Սիրելի Չոպանեան,

Վաղը ժամը 10-ին, առաւօտեան կու գամ ձեզ տեսնելու:

Կ. ՋԱՐԵԱՆ

Դ.²⁴

[Փարիզ, անթուակիր]

Սիրելի Չոպանեան,

Կ'ուզէի տեսնուել ձեզ հետ այս երեկոյ: Պիտի սպասեմ «Շոպ պարիզ-
իէն» [ժամը] 8-9-ին: Կարեւոր է:

Կ. ՋԱՐԵԱՆ

Ե.²⁵

8-VIII-25

[Փարիզ]

Սիրելի պ. Չոպանեան,

Թերթիս²⁶ հրատարակութեան հարցով կ'ուզէի ձեզ հետ տեսնվիլ: Ուզում
եմ մտցնել հայկական մաս²⁷ եւ լաւ կ'լինէր միասին խորհրդակցելինք: Ե՞րբ
պիտ[ի] գաք քաղաք:

Ձեր

ԿՈՍՏԱՆ ՋԱՐԵԱՆ

Զ.²⁸

5-IX-25

[Փարիզ]

Սիրելի պ[արոն] Չոպանեան,

Արդե՞օք վերադարձաք: Եթէ շատ զբաղ[ո]ւած չէք, բարի եղէք, երկուշաբ-
թի ամսի 7-ին, ժամը 5-ի մօտերը անցնել խմբագրատուն, խօսելու համար
հանդիսի հայկական բաժնի մասին:

Ձեր Կ. ՋԱՐԵԱՆ

Է.²⁹

[Փարիզ, անթուակիր]

Վաղը 6-ին կարելի՞ է կ[ը] լինի ձեզ տեսնել:

Մնամ ձեր

ՋԱՐԵԱՆ

Ը.³⁰

[Փարիզ, անթուակիր]

Սիրելի Չոպանեան,

Երեկոյեան ժամը 6-ին, եթէ կարելի է պիտի գամ տանելու խալիմ³¹. Վաղը
առաւօտ պիտի տանեն Ամստերդամ: Վաղը առաւօտ 9-ին:

Կ. ՋԱՐԵԱՆ

Սիրելի Չոպանեան,

Այս վայրկեանիս իմացայ ձեր դասախօսութեան մասին³³. դժբախտաբար կանխաւ ժամադրութիւն ունեմ եւ ստիպ[ո]ւած եմ բացակայել: Սա ի՞նչ կազմակերպութիւն է...

Շատ ցաւում եմ, հաւատացէք: Մնամ ձեր

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Ժ.³⁴

30-XII-25

Rue Malleville, 49

Enghien

Սիրելի պ[արոն] Չոպանեան,

Ներեցէք որ մինչեւ այժմ չեմ կարողացած գալ ձեզ տեսնելու: Յոյս ունէի, որ միջոցներս շուտով ինձ պիտի ներեն ձեր պարտքը վճարելու եւ սպասում էի... Դժբախտաբար նիւթական դրութիւնս ատելի վատթարացաւ եւ այսօր գտնուում եմ ուղ[ղ]ակի տոսկալի դրութեան մէջ. աչքի առաջ ունենալով մանաւանդ այն ծանր բեռը որ ուսերիս վրայ է³⁵: Առ այժմ ոչ մի տեղից էլ ոչ մի յոյս չ'ունեմ: Քայլեր առի որեւէ գործ ճարելու համար[.] նա էլ չ'յաջող[ո]ւեց: Այնպէս որ խնդրում եմ ներէք, որ ժամանակին չկարողացայ տալ պարտքս եւ բարի եղէք սպասելու մինչեւ որ մի տեղից մի յոյս ծագի:

Ձեզ մօտ էի թողել մի ձեռագիր, բարի եղէք ինձ դրկելու, գուցէ պէտք կայ որիչ որեւէ յօդուածի համար:

Ընդունեցէք սիրալիր բարեւներս:

Կ. ԶԱՐԵԱՆ

ԺԱ.³⁶

La Coupole

Café Restaurant

Bar Americaine

102, Boul. du Montparnasse

Paris

7-8-28

Central Hotel

1 bis, Rue du Marne

Սիրելի պ[արոն] Չոպանեան,

Մի քանի օրով Փարիզ եմ եւ չէի ուզել մեկնել առանց ձեզ հետ տեսն[ո]ւելու: Լսեցի որ այժմ գիտում էք եւ որ քաղաք էք գալիս երբեմն միայն: Կ'ուզէի՞ք ինձ «նշան անել» եւ ժամադրութիւն տալ:

Մնամ ձեր

Կ. ԶԱՐԵԱՆ

ԺԲ.³⁷

4-12-28

Via Scutari, 9a Lido

Venezia

Սիրելի պ[արոն] Չոպանեան,

Արդեօք պատ[ո]ւիրեցի՞ք որ ինձ «Ապագա[յ]»³⁸ դրկեն: Խնդրեմ մի մոռանաք. բարեւներ խաղաղ այս Վենետիկից:

Չեր

Կ. ՉԱՐԵԱՆ

ԺԳ.³⁹

[Վենետիկ, 29-12-28]⁴⁰

Բարեւներ եւ շնորհատրութիւններ[:] «Ապագան» ինչո՞ւ չեն դրկում:

Կ. ՉԱՐԵԱՆ

ԺԴ.⁴¹

8-1-29

Via Scutari, 9a Lido

Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

“Roseraie”-ի երրորդ հատորը⁴² հոյակապ է եւ նոր տար[ո]ւայ աւելի գեղեցիկ ն[ո]ւէր չէի կարող ստանալ: Շնորհատրութիւններս ու շնորհակալութիւններս եմ յայտնում ձեզ:

Ստացայ «Ապագաները» եւ կարդացի ձեր ծրագիրը «Անահիտի»⁴³ վերահրատարակման համար⁴⁴: Լայն եւ գեղեցիկ ծրագիր, մեծ եւ ա՛յնքան անհրաժեշտ գործ մեր տարաբախտ այս շրջանում: Վախում եմ միայն ծրագրի չափազանց լայնութիւնից: Մեր հայ հանդէսները մինչեւ հիմայ մի տեսակ գրական տոպրակներ եղած են ուր ամէն ինչ մտած է: Այդ վտանգից իմ կարծիքով պէտք է խուսափել: Ամէն բանից մի կտոր, մի նմոյշ, մի պատառ բաւարարելու համար բոլոր ճաշակները. դա եղել է մեր տարեցոյցների ոճրագործ եւ դժբախտ սխառներ: Ըստ իս աւելի լաւ է քիչ, բայց ամբողջական գործեր տալ, ինչպէս անում էին մասամբ ռուսահայ պլանաֆաները⁴⁵: Օր. մի բանաստեղծից տալ 10 կտոր, մի վէպ, մի քատր[ոն] եւ այլն: Այդ անհրաժեշտ է մանաւանդ մի հանդէսի համար որը երկու ամիսը մի անգամ լոյս պիտի տեսնէ. ուստի պիտի ունենայ աւելի շուտ գրքի տեսական արժէք, քան հանդէսի թուցիկ եւ ժամանակաւոր բնոյթ:

Եթէ այդ իմ տեսակէտիս հետ համաձայն էք այն ժամանակ պիտի առաջարկեմ ձեզ եթէ ոչ միանգամից, գուցէ մաս-մաս - 3-4 անգամից - հրատարակել իմ «Ճորճիւրդները»⁴⁶, որ ես մտադիր էի «Հայրենիքին»⁴⁷ տալ: Ժամանակին «Բարձրավանքը» հրատարակեց *երկու* մաս⁴⁸ (ընդամենը *վեց* է) բայց դժբախտաբար քաղաքական դէպքերը արգելք եղան շարունակելու⁴⁹: Դուք գիտէք իտալական քարգմանութեան⁵⁰ յաջողութիւնը եւ այս օրերս ինձ գրում են որ Ամերիկա լոյս պիտի տեսնի նոյն գործի *անգլերէն* քարգմանութիւնը⁵¹: Աւելցնեմ, որ հրատարակուած մասերը *վերամշակ[ո]ւած* են, ուստի գրեթէ նոր: Թէպէտ վաղուց գր[ո]ւած գործ⁵², այն ու ամենայնիւ ծիծաղելի է, որ օտար քարգմանութիւնները լոյս տեսնեն եւ հայերէն բնագիրը մնայ անտիպ: Դուք կարող էիք, նոյնիսկ - թղթի դրամը չնչին է - մի 300 օրինակ առանձին տպել, ինչպէս սկսել էր առել «Արզուման» տպարանը Պօլսում⁵³ եւ գիրքը մտցնել ձեր «Մատենաշարի» մէջ⁵⁴: Ես ինձ համար կարելորդ եմ համարում այս գործի հրատարակութիւնը - յառաջաբանով - որովհետեւ այս բոպէիս գրում եմ ուրիշ գործեր, որոնք քատերական բնոյթ ունեն եւ իմ հին քերթ[ո]ւածների եւ ն[ո]ւաճումների շարունակութիւնն են:

Գրեցէք ինձ այդ մասին, որպէսզի սկսեմ արտագրել եւ, եթէ ընդունելի էր գտնում, ե՞րբ պէտք է ձեզ դրկեմ եւ ինչ պայմաններով:

Ձեր
Կ. ՋԱՐԵԱՆ

ԺԵ.⁵⁵

23-1-29
[Վենետիկ]

Սիրելի Չօպանեան,
Ձեր նամակին անմիջապէս չկարողացայ պատասխանել, որովհետեւ մի քիչ հիւանդ էի: Ներողութիւն:

Այն ամէնը ինչ որ գրում էր հանդէսի մասին շատ լաւ է. վստահ եմ, եւ ի սրտէ ցանկանում եմ որ յաջողէք: Առաջին ք[ո]ւի համար կ'դրկեմ - մի 10 օրից - մի արձակ, իսկ ինչ վերաբերում է «Խորհուրդներին» կարելի չէ [?]ր գտնէ երկրորդ ք[ո]ւից սկսել նրանց հրատարակութիւնը, աչքի առաջ ունենալով որ երրորդը պիտի լոյս տեսնի եկող աշնան՝ 8-9 ամիսից!

Վարձատրութեան համար ոչ մի դիտողութիւն չեմ անում⁵⁶, աչքի առաջ ունենալով նոր գործը, թէպէտ «Հայրենիք»ը ինձ վճարում է 1 եւ 1/2 տալեր⁵⁷ եւ այս վարձատրութիւնները իմ ապրելու միակ միջոցներն են:

Կարդացի որ հանդէսը լոյս պիտի տեսնի Ապրիլին⁵⁸, ուստի եթէ իմ գրուածքս դրկեմ մինչեւ Փետրուար 15-ը, ժամանակին կ'հասնին:

Չեղբիս տակ կարելոր մի գործ ունեմ եւ չեմ կարող կիսատ թողնել ուրիշը սկսելու համար. ա՛յդ է պատճառը որ մի քիչ պիտի ուշանամ:

Շուտով Փարիզ պիտի գայ իբրեւ մեծաւոր Հայր Գաբրիէլ Նահապետեանը⁵⁹: Շատ լաւ մարդ է. վերին աստիճան[ի] հայրենասէր եւ հակավատիկանական: Յիշո՞ւմ էք. Ֆլօրանսից ժամանակին ձեզ դրկած էի նրա մի նամակը վանքի դրութեան մասին⁶⁰: Նրա հետ կարող էք ամէն բանի մասին խօսել եւ պնդել խնամակալների հարցը - որ ես գտնում եմ շատ կարելոր - լուծելու համար:

Մնամ ձեր
Կ. ՋԱՐԵԱՆ

ԺԶ.⁶¹

7-3-29
[Վենետիկ]

Սիրելի Չօպանեան,
Գր[ո]ւածքս 3-4 օրից անպատճառ կ'դրկեմ. ուստի ինձ համար տեղ պահեցէք:

Ձերն բարեւներ
Կ. ՋԱՐԵԱՆ

ԺԷ.⁶²

11-3-29
Վենետիկ

Սիրելի Չօպանեան,
Դրկում եմ «Անահիտի» առաջին քիւի համար «Քարը»⁶³: Յոյս ունեմ որ գոհ կ[ը] մնաք, չնայած որ ստիպ[ո]ւած մի քիչ ուշացայ: Աշխատում էի մի երկար պօժեմա[յ]ի վրայ - Տատրագոմի Հարսը⁶⁴ - որը անկարելի էր կիսատ թողնել եւ ուրիշ բան սկսել: Հիմայ որ վերջացրի, աւելի ազատ եմ:

Դուք ինձանից նաեւ ուզում էիք տեղեկութիւններ «Խորհուրդների» մասին, քերթերի կարծիքներ եւ այլն: Ես միշտ խուսափած եմ այդ կարծիքները հայերէն քարգմանել տալու, շուրջս աւելորդ ռեկամ չ'անելու համար եւ Հ[րանտ] Նազարեանցի⁶⁵ ծիծաղելի դրութեան մէջ չ'ընկնելու համար⁶⁶: Սակայն, ահա մի քանի տեղեկութիւններ⁶⁷:-

«Երեք երգեր ասելու համար վիշտը երկրի եւ վիշտը երկ[ի]նքների»⁶⁸ - հրատարակ[ն]ւած է առաջին անգամ Միլանի⁶⁹ «Eroica»-ի կողմից⁷⁰: Մի քանի ամիս յետոյ լոյս է տեսած երկրորդ հրատարակութեամբ եւ առանձին⁷¹: 1916-ին, Lanciano-ի Carabba հրատարակիչը⁷² մտցրել է իր օտար եւ իտալացի դասական գրողների մատենաշարի մէջ⁷³, ուր անընդ[ի]ատ վերահրատարակւում է⁷⁴: 1920-ին⁷⁵, Ottorino Respighi⁷⁶, հռչակաւոր երաժշտագէտը, երաժշտութեան է վերածել (choeurs, orchestre, soli)⁷⁷, [համերգեր] տ[ն]ւել են Հոռմ, Լայպցիկ, Չինչինատի եւ ուրիշ տեղեր⁷⁸ ու առաջին մասը՝ քարգման[ն]ւած չորս⁷⁹ լեզուների՝ հրատարակ[ն]ւած է Բերլինի «Universal Edition»-ի⁸⁰ կողմից⁸¹:

Երբ «Երեք երգերը» լոյս տեսան, գրեթէ բոլոր իտալական մեծ քերթերը մօտ 24 յօդուածներ ն[ն]իւրեցին⁸²: «Il Popolo d'Italia»-ն⁸³, որ այն ժամանակ խմբագրում էր ինքը Մուսօլինին⁸⁴, գրեց որ վերջին տարիներին լոյս տեսած բանաստեղծական գրքերից «Երեք երգերը» ամենարժեքաւորն է եւ որ մի ազգ որ այդպիսի բանաստեղծներ ունի արժանի է իր ճակատագրի տէրը դառնալու եւ այլն⁸⁵:

Ադա Նեգրին⁸⁶ գրեց որ «մասեր կան որոնք հասնում են աստուածային գեղեցկութեան եւ պէտք է երախտապարտ լինել հեղինակին մարդկութեան տւած իր ն[ն]ւերի համար» - (Carabba-ն իր հրատարակութեան յառաջաբանի մէջ այդ խօսքերը յիշում է)⁸⁷:

Bologna-ի Համալսարանում, Կարդուչիի⁸⁸ եւ Պասկօլիի⁸⁹ ամբիոնը յաջորդող Alf[redo] Galletti[ն]⁹⁰ գրեց, որ «միայն Շէլլին⁹¹ կարող էր հասնել այդ զգայնութեան եւ այդքան մաքուր (pura) բանաստեղծութեան»:

Գրեթէ նոյն իմաստով արտայայտուած են Miguel de Unamuno-ն, սպանեացի յայտնի գրողը⁹², Լուտօլափսկի՝ Սօրբօնի սլաւ գրական[ութեան] դասախօսը, այժմ Վիլնայի Համալսարանի recteur-ը⁹³, որ մի մասը քարգմանած է լեհերէն լեզ[ն]ւով⁹⁴:

Օր. Իրեն Ալեքսանդեր⁹⁵, ամերիկոսի բանաստեղծուհի եւ Նիւ Իօրկի քաղաքներից մէկի վարիչը, քարգմանել է անգլիերէնի եւ շուտով պիտի հրատարակ[ն]ի:

Շարքը կարող եմ շատ երկարել, բայց այդքանն էլ բաւական է: Արեք ինչ կ'ուզէք: Եթէ այդ մասին խօսք իսկ չ'անէք՝ ça ira quand même⁹⁶:

Մնամ ձեր
Կ. ԶԱՐԵԱՆ

- Երգերը, սկսում եմ արտագրել: Ամսի վերջին կ'ըրկեմ առաջի մասերը:

ԺԸ.⁹⁷

7-7-29
[Վենետիկ]

Միքէլի Չօպանեան,

Վենետիկից մի քանի օրով բացակայ էի եւ այդ պատճառով չկարողացայ ժամանակին ձեռք գրել: Գլուխս շատ խառն է. պատրաստում եմ ընտանիքս (մի մասը) տեղափոխել Տրանսիլվանիա[,]⁹⁸ ուր ասում են ապրելու միջոցները ւաւելի դիւրամատչելի են քան այստեղ, ուր ամէն ինչ սղած է: Հիմա էլ անցագրի դժուարութիւններ ունեմ⁹⁹ եւ չգիտեմ այդ տակնովրայութիւնը երբ պիտի վերջանայ: Պէտք է գոհել ժամանակ[,] աշխատանք՝ ի խնդիր հացի, նա էլ շատ անորոշ: Հայ գրող լինել եւ այդպիսի բեռ կրել՝ շատ դժուար է: Ցաւը նրանումն է, որ սկսած աշխատութիւններս էլ կիսատ մնացին եւ ե՞րբ պիտի կարողանամ վերսկսել՝ անորոշ է:

«Անահիտը» ժամանակին ստացայ: Առատ բովանդակութիւն ունի՝ չափազանց առատ: Կան բաներ որոնք կարող էին եւ դուրսը մնալ, մանաւանդ կանայք¹⁰⁰. Պօլսից ժայթքած անուշ այդ թուրը¹⁰¹: Բոլոր այդ Անա[յ]իսները¹⁰² եւ այլն՝ խոտով լեց[ո]ւած դուքակների գրականութիւն են մշակում, որոնցից պէտք է ազատագր[ո]ւել: Ի գուր չէ որ Օսմանեան Կայսրութիւնից մնացել է Պերա[յ]ի ցեխը եւ «Հայ Կինը»¹⁰³: Ու թող մնան, ի՞նչ պէտք կայ նրանց գաղութահայութեան ետեւից քարշ տալ... Մնաց որ ձեր գործը ամէն տեսակով դժ[ո]ւարին է, մանաւանդ սկզբի շրջանում եւ կասկած չ'ունեմ որ հանդէսը քանի գնայ պիտի լաւանայ, սեղմ[ո]ւի, ամփոփ[ո]ւի եւ ստանայ վերջնական այն դիմագիծը որը կազմում է ուրոյն ուղղութիւն ունեցող հանդէսների պսակը: Ցանկանում եմ ձեզ յաջողութիւն:

Չեմ կարծում, վերը յիշ[ո]ւած պատճառներով, որ կարողանամ երկրորդ քիւին մի քան դրկել, բայց հազիւ տեղ հասած, յուսամ որ կարելիութիւնը պիտի ունենամ աշխատելու, ուստի եւ աշխատակցելու «Անահիտին»:

Մնամ սիրով ձեր

Կ. ԶԱՐԵԱՆ

ԺԹ.¹⁰⁴

15-8-29

Վենետիկ

Սիրելի Զօպանեան,

Ներեցէք որ չկարողացայ անմիջապէս պատասխանել ձեր շատ սիրալիր եւ իսկապէս բարեկամական նամակին: Մեր իրականութեան մէջ վարժ[ո]ւած չենք այդպիսի բարեկամական վերաբերմունքին, այլ ընդհակառակը ամէն մարդ ճիգ է անում դեռ ւաւելի դժ[ո]ւարացնել արդէն դժ[ո]ւարին մեր կեանքը: Շնորհակալ եմ որ մտածեցիք միջակայն օգնութեանս գալ ինձ. թեպէտ երբեք չէի [մտ]ածում դիմել յայտնի ֆոնդին¹⁰⁵. գու[ցե] եւ չկարող եմ լինել ուրիշ հայ [գրողներ], որոնք ինձանից ւաւելի վատ դրութեան մէջ են գտնուում: Բայց [մինչ այդ] դուք այդ մասին դիմում ա[ռե]լ էք. [պ[արոն] Մալեգեանի¹⁰⁶ նամակը դեռ չստացած որոշ[ում] եմ ընդունել եւ առ այժմ մնալ այստեղ, [նոր] մի երկրի անյայտութեան չմատնելու համար ինձ եւ ընտանիքիս:

«Խորհուրդների» մի մասը արդէն արտագրած եմ եւ 4-րդ քիւին անպայման կ'հասցնեմ¹⁰⁷: Անցեալ անգամ մոռացայ ձեզ գրել որ լաւ կ'լինեն կողքի թուղթը փոխել՝ հանդէսների արտաքին զգեստաւորումը շատ մեծ նշանակութիւն ունի. ւաւելի հաստ թուղթ եւ [ւաւելի] պարզ տառեր ըստ իս ւաւելի գեղեցիկ պիտի լինի:

Եթէ միջոցներս ներեն պիտի ուզեմ այս ձմեռը գոնէ մի ամիսով Փարիզ գալ. այն ժամանակ կ'տեսն[ո]ւնեմ եւ երկար կ'խօսենք:

Խնդրում են շնորհակալություններս յայտնել նաեւ պ. Մալեգեանին:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

Ի.¹⁰⁸

28-8-29
[Վենետիկ]

Սիրելի Չօպանեան,

Ահաւասիկ ստացագիրը: Նորից յայտնում եմ ձեզ իմ շնորհակալութիւններս: Երկար մտածելուց յետոյ, որոշեցինք, նաեւ կնոջս հիւանդութեան պատճառով, որ ընտանիքս առայժմ գնա[յ] Տրանսիլվանեայ իսկ ես ընդունեմ օտար բարեկամներին սիրալիր հրաւերը['] գնալ մի երկու երեք ամսով Փարիզ: Ուրեմն այդ դրամը ճիշտ ժամանակին կ'ուզայ յոգալու ճամբու ծախսերը: Երբ տեսն[ո]ւենք, կ'պատմեմ ձեզ այն պատճառները որոնք գրեթէ անկարելի են դարձնում կեանքը Վենետիկում:

Պ[արոն] Մալեգեանին ուզեցի գրել, բայց մտածեցի որ աւելի լաւ կ'լինի երբ գամ Փարիզ անձամբ այցելեմ նրան եւ յայտնեմ շնորհակալութիւններս: Փարիզում կ'լինեմ Սեպտեմբերի վերջերը: Մի քանի ծրագիրներ ունեմ՝ այդ մասին պիտի ուզեմ ձեզ հետ խորհրդակցել:

Մնամ սիրով ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԻԱ.¹⁰⁹

5-XI-29
27, Bd. Raspail
Paris

Սիրելի Չօպանեան,

Ձեր նամակը, հասցէս փոխած լինելով, միւս օր, կիրակի ստացայ - չկարողացայ ձեր տ[ո]ւած ժամադրութեան գալ:

Անցեալ օր Օր[իորդ] Մարգարիտը¹¹⁰ եւ մայրը ինձ ասացին որ ձեզ հետ խօսած են իրենց ճաշի գնալու համար: Կ'ուզե՞ք շաբաթ կամ կիրակի երեկոյ[ե]լան ընթրիքի նրանց գնանք, այդ պարագային բարի եղէք առաջ[ո]ւանից նրանց եւ ինձ իմաց տալ:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԻԲ.¹¹¹

12-XI-29
Փարիզ

Սիրելի Չօպանեան,

Շատ լաւ երկուշաբթի ժամը 4-4 1/2 կը գամ Մալեգեանը տեսնելու. սակայն մոռացել էք ինձ *հասցէն* տալ: Բարի եղէք երկտողով ինձ յայտնելու այդ: Մնացածի մասին կ'ասեմ:

Մնամ ձեր
Կ. ՉԱՐԵԱՆ

ԻԳ.¹¹²

Փարիզ, 5-XII-29
27, Bd. Raspail

La Coupole

Café Restaurant
Bar Americaine
102, Boul. du Montparnasse
Paris

Միրելի Չօպանեան,

Ներեցէք որ անցեալ կիրակի չկարողացայ գալ. զանազան պատճառներ արգելք եղան եւ ժամանակին չկարողացայ ձեզ այդ մասին գրել:

Եկող Կիրակի՝ սիրով, միայն թէ աւելի լաւ չէ[]ր լինի այս կողմերում տեսն[ո]ւիմք: Ամենայն դէպս այս անգամ կը գամ ձեզ մօտ ժամը 6-7-ի կողմերը:
Տոմսակ չեմ վերցնի:

Մնամ ձեր
Կ. ԶԱՐԵԱՆ

ԻԳ.¹¹³

27-XII-29
Փարիզ

Միրելի Չօպանեան,

Լաւ, եկող կիրակի: Երկու բան պիտի խնդրեմ եթէ կարելի է[.] «Անահիտի» վերջին գիրքը¹¹⁴ որկել տ[ո]ւիք կնոջս. Mme Takouhi Zarian, Str Castelului 2, Brasov (Roumanie)[.] եւ առաջին քիւր, ուր «Քարը» կայ, ինձ:

«Ժողովուրդների» առաջին երկու մասերը *պատրաստ եմ*. պէ՞տք է ձեզ որկել, թէ [] կարելի է սպասել մինչեւ եկող կիրակի:

Մնամ ձեր
Կ. ԶԱՐԵԱՆ

ԻԵ.¹¹⁵

30-I-30
[Փարիզ]

Միրելի Չօպանեան,

Մինչեւ վերջին վայրկեանը դեռ յոյս ունեի որ Կիրակի օր պիտի կարողանամ ձեզ հետ ճաշել. բայց դժբախտաբար պայմանները այնպէս դասաւոր[ո]ւեցին, որ շաբաթ օրը պիտի մեկնեմ եւ ժամադրութիւնը յարգել չպիտի կարողանամ: «Նոր Ուղիւն»¹¹⁶ որկույմ եմ ձեզ փոստով:

Երբ վերջապէս հասցէ ունենամ կ'որկեմ ձեզ: Գնում եմ առանց վստահ ըլլալու ուր խարխիս պիտի նետեմ...

Մնամ ձեր
ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ԻԶ.¹¹⁷

22-5-30
Փարիզ

Միրելի Չօպանեան,

Ներեցէք որ անմիջապէս չկարողացայ պատասխանել ձեր նամակին. անհանգիստ էի եւ զբաղ[ո]ւած: Այս կիրակի դժբախտաբար չպիտի կարողանամ ձեզ հետ միասին ճաշել. յաջորդ կիրակի յուսամ ազատ կ[ը] լինեմ - մեկնելու առաջ կ[ը] տեսն[ո]ւեմք:

Մնամ ձեր
Կ. ԶԱՐԵԱՆ

Սիրելի Չօպանեան,

«Անահիտի» վերջին քիւերը չստացայ¹²⁰: Հասցես չէի կարող ձեզ դրկել այն պարզ պատճառով որ բնակարան չ'ունէի եւ ես էլ չէի իմանում ո՞ւր եմ: Հիմա ընտանիքս եկաւ եւ նորից տեղաւոր[ո]ւեցինք Վենետիկ, այլեւս մնայուն բնակարանով եւ տեւական հասցեով: Ուստի բարի եղէք հանդէսը ինձ դրկել, ինչպէս առաջ: Շատ շնորհակալ պիտի լինէի եթէ կարողանայիք «Ապագայի» մասին էլ կարգադրութիւն անել, թէ չէ հայ կեանքի զանգի մի ձայնը ստիպ[ո]ւած եմ լսել¹²¹ եւ ձեր յօդ[ո]ւածներն էլ առիթ չ'ունեն կարդալ[ու]:

Մնամ ձեր

Կ. ԶԱՐԵԱՆ

20-3-31

Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

Նախ, նորից յայտնում եմ ձեզ իմ շնորհակալութիւններս ձեր[] գաւա-
կիս¹²³ համար առած քայլերու համար: Այդ պ[արոն] Սիւրբատեանի¹²⁴ անու-
նը լսած եմ եւ գիտեմ որ Փիրումեանի միջոցով զանազան վաճառականական
գործեր էր անում: Բայց ես անձամբ իրեն հետ հանդիպած չեմ եւ չեմ հաս-
կանում ինչո՞ւ ինձի դէմ պիտի լինի ու մանաւանդ ինչո՞ւ գաւալիս դէմ պիտի
լինի... Տեսնենք: Հայ իրականութեան մէջ արդէն ամէն բան շատ տարօրինակ
է. երբ մարդ ինձ մման ապրում է քաշ[ո]ւած եւ հեռ[ո]ւից դիտում՝ զարմանալի
տեսարաններ են պարզում - ամենաոգեւոր[ո]ւած լաւատեսութիւնն իսկ չքա-
նում է: Միշտ յիշում եմ Կիլիկիոյ մէջ ձեր իսկ պատմած դէպքերի մասին¹²⁵.
մարդ չգիտի ծիծաղի թէ լայ: Նոյնը շարունակում է այսօր, ամեն տեղ ուր մի
քանի հայեր կան, ու այդ՝ բոլոր հարցերի մէջ, լինի կրօնք, թէ գրականութիւն,
թէ քաղաքականութիւն:

Ուրախ եմ որ վերջապէս պիտի կարողանաք Հայաստան գնալ¹²⁶ եւ իբրեւ
ազնիւ եւ գիտակից դիտող պիտի տեսնէք այն ժամանակ որ «Անցորդի»¹²⁷
նկարագրութիւնները բնաւ չափազանցութիւններ չեն, այլ մէկը պատմած եմ
եւ տասը լռած¹²⁸: Ու այդ տասը գրած եմ մղ[ո]ւած զուտ հայրենասիրական
զգացումից: Նոր եկած, բոլորովին չեզոք անձնատրութիւններ, պատմում են
ինձ որ իմ տեսածներս «բախտաւոր» շրջանի երեւոյթներ էին¹²⁹ եւ այսօր Հա-
յաստանի բնակիչները (բուն ժողովուրդը եւ բուն մտաւորականութիւնը) շատ
բան կ[ը] տար այդ շրջանին վերադառնալու համար:

Այն ինչ որ վտանգաւոր է եւ միանգամայն սպանիչ մեզ համար, այդ այն
ստրկական ոգին է որ մտել է նոյն իսկ երիտասարդ գրողների ոգու մէջ: Այդ
տղերը ստիպ[ո]ւած են հաջող շնիկների դեր խաղալ մի կտոր հացի համար:
Աչքի առաջ ունեցէք որ բոլոր այդ Մահարիները¹³⁰ եւ այլն կոմունիստ չեն եւ
գրում են մեզ դէմ¹³¹ Կարինեանի¹³² հրամանով¹³³: Երբ ես մեկնում էի Հայաս-
տանից, Թոթովենցը¹³⁴ եկաւ մօտս եւ ասեց. «Սիրելի Զարեան, գիտենք որ
չպիտի վերադառնաս եւ պիտի գրես այն ինչ որ մենք ամենքս մտածում ենք:

Երբ վաղը մեզ ստիպեն քեզ դեմ գրել, կ'ներես, գիտես դրութիւնը...»[:] Եւ այդ[:] բոլորի անունից¹³⁵: Ահա ինչու, ինչ որ էլ այնտեղ գրեն ինձ համար նշանակութիւն չ'ունի եւ երբեք էլ պատասխան չեն տալ:

Գուր կարծում էր որ այնտեղ կայ հասարակական միտք, հետաքրքրութիւն տեղական գրականութեան շուրջը եւ այլն.- սխալում էր: «Նորքը»¹³⁶ ձրի էին բաժանում եւ տասը ընթերցող չ'ունէր: Նրա քարտուղարը¹³⁷ ինձ ասում էր որ *երեք* հատ է ծախ[ն]ւած միայն գոյութեան օրից ի վեր: Իսկ «Անցորդը» աւելի է կարդաց[ն]ւել այնտեղ (ծածուկ) քան արտասահմանում: Նոյնը «Անահիտի» վերաբերմամբ: Պատմեմ ձեզ մի դէպք: Ժամանակին դուք Լեւ[ոն]ի¹³⁸ մի հատոր «Roseaie»¹³⁹ որկած էիք *Թիֆլիս*. արդ, մի օր Աշոտ Յով[ի]աննէսեանը¹⁴⁰ այդ գիրքը բերաւ ինձ խնդրելով մի բան գրել - ու արտայայտ[ն]ւեցի այդ առիթով իրենց մասին այնպէս ինչպէս ոչ ոք չէր համարձակ[ն]ւած արտայայտ[ն]ւել¹⁴¹: Քիչ յետոյ Լեւոն եկաւ Երեւան եւ ես հարցրի իրեն գրքի մասին. տեղեկութիւն չ'ունէր: Ամէն բան այդպէս է: Նոր Նախ[ի]ջ[ե]լւանում դրութիւնը տարբեր է. ռ[ու]սները շատ բան չեն հասկանում եւ գրքերն էլ կարող են տեղ հասնել, բայց Հայաստանում... Իմ ժամանակ «Ապագայ» էր գալիս կամ Կոչնակ¹⁴². բայց ո՞վ էր տեսնում. շատ շատ «Խոր[հրդային] Հայաստ[անի]»¹⁴³ խմբագրատուն: Նրանք վախում են դրսի ազատ մտքից եւ ուրովիենտեւ այդ միտքը ծածկաբար ներս է մտնում՝ կարծում են որ հայիւրանքներով կարող են առջելը առնել: Ենչու որա հակառակը՝ տեղացիները գիտեն կարդալ տողերի մէջ եւ ժողովրդականութիւն ստացողը ա՛յն է որին հայիւրում են: Հայաստան գնացողը նախ հրապուրում է. մեր հողը, մեր երկիրը, ցոյց տ[ն]ւած ճարպիկ ընդունելութիւնը եւ այլն, եւ անտեսում է շատ բան: Սակայն ամէն բան պարզում է ա՛յն ժամանակ երբ ստիպ[ն]ւած է այնտեղ ապրել եւ աշխատել: Առիթը կ'ունենաւ անշուշտ մտերիմ խօսակցութիւններ ունենալ զանազան անձնատրութիւնների հետ եւ կ'տեսնէր:

Չնայած դրան, ես եւս ձեզ նման կարծում եմ որ եղածը նիւթապէս ամէն բանով պէտք է պաշտպանել. խուսափել արկածներից եւ ուժ տալ «շինարարութեան»: Բայց նաեւ պէտք է փրկել հայ անհատի ազատ ոգին, թէ չէ վաղը, մանաւանդ մեծամասնական սխտեմի յաջողութեան պարագային, մենք իբրեւ ինքնուրոյն տարր, իբրեւ ազգ կը կորչենք, ինչպէս կորչում ենք Ամերիկայում: Վաղը Ռուսաստանը պիտի դառնայ աւելի կլանող քան Ամերիկան եւ ոչ մի վերացական սահման մեզ չափտի կարողանայ պաշտպանել, եթէ ազատ ոգին, խոր ազգային գիտակցութիւնը մեռնի մեր մէջ:

Գալով այդ երանելի եւ «բէխաբար»¹⁴⁴ Արեւեանին¹⁴⁵, ասեմ անմիջապէս որ իսկապէս Շամախի ծն[ն]ւած եմ: Նա շատ լաւ ճանաչում է իմ ընտանիքս եւ Չարեան անունն է որ շփոթեցնում է նրան: Գրեցէք նրան որ Խաչատուր Բէկի տղան է¹⁴⁶: Ինքը մօտ ազգական է Շիրվանին¹⁴⁷, իսկ Շիրվանը իմ մայրիկիս¹⁴⁸ մօրաքրոջ տղան է: Իր եղբայրները¹⁴⁹ այդ շատ լաւ գիտեն: Ոչ Չարեան այլ Եղիազարեան:

Աչքի առաջ ունեցէք, որ Հայաստանից դուրս ապրողները՝ Բագու, Թիֆլիս եւ Ռ[ու]սաստանի ուրիշ վայրերում՝ նոյնքան տեղեկութիւն ունեն Հայաստանի մասին ինչքան մենք: Նրանք եւս մեզ նման կարծում են, որ Հայաստանում «ուրիշ բան է», որ Ռ[ու]սաստանի մէջ տեղի ունեցած դէպքերը այնտեղ չեն կրկնում, որ հայը հայ է եւ այլն: Եւ չնայած դրան երկիր չեն գնում: Ես յի-

շում եմ որ Թիֆլիս ուղղակի զարմացած էին որ ես ուզում եմ բնակ[ու]ել Երեւան. նոյնը Բագուում: Հայրենասիրութիւն, այո՛, բայց գնալ ընկնել այն ծակը...

Մի խօսքով, մեր այս Արմենիան... Չգիտես որ կողմդ մայես. ազգը փշուր փշուր է եղել եւ ինչ որ մի բան մէջը մեռել է:

Մի բանի օր առաջ իմացայ - թող այդ մեր մէջ լինի, թէ չէ տղաքս կ'հալածեն - որ նոր այս Միսիթարեան վանքի աբբահայրը¹⁵⁰ եւ իր կլիքը¹⁵¹ Մուրադ-Ռաֆայելեան դպրոցի դրամներից 11.000.000 լիրեք գողացել են: Պաղովայի պրոֆ. Ասլանը¹⁵² զայրացած Հռոմ վազել է, քննութիւն պահանջել եւ այլն: Ամբողջ մամակագրութիւնը ցոյց տ[ո]ւին ինձ. դժբախտաբար այդ իրողութիւն է: Երկար բանակցութիւններից եւ սպառնալիքներից յետոյ - մէջը կաշառ[ո]ւած կարդինալներ¹⁵³ կան - վերջապէս նշանակ[ո]ւած է մի յանձնախումբ, բաղկացած երեք իտալացի տնտեսագէտներից, հաշիւները մայեսլու համար: Տեսնենք ինչ պիտի լինի: Աւելացնեմ, որ այդ մամակագրութիւնը դրկ[ո]ւած է նախկին Մուրադեան աշակերտների Փարիզի ընկերակցութեան¹⁵⁴, ուր Շահինի¹⁵⁵ միջոցով կարող էր ամէն բան իմանալ:

Մի խօսքով, մեր այս Արմենիան...

Մնամ սիրով

Կ. ՉԱՐԵԱՆ

Պիտի խնդրէի, եթէ կարելի է, «Երեք երգերի»¹⁵⁶ համար մի փոքրիկ յայտարարութիւն դնել «Անահիտի» մէջ: Գինը 3 դոլ[ար]¹⁵⁷:

ԻԹ.¹⁵⁸

26-3-31

Վենետիկ

Սիրելի Չօպանեան,

Յիշում էք անշուշտ, անցեալ տարի միասին գացինք Մալեգեանի մօտ գաւակս Նուպարեան սաներու ֆօնտին¹⁵⁹ արձանագրելու համար եւ Մալեգեանը մեզ ասեց, որ դեռ կանուխ է[,] երբ ժամանակը գայ մեզ իմաց կ[ը] տայ եւ առհասարակ պէտք եղածը կ'անի: Արդ, վերջերս նրան գրած մամակիս այս առթիւ, ահա ինչ է պատասխանում: - «Ինձի կը յանձնարարէք ձեր գաւակը, որուն համար սիրայօժար կ'ընեմ պէտք եղած յանձնարարութիւնը Նուպարեան սաներու վարչութեան, որ Պրիստլ կը գտնուի եւ մեծ մասամբ կը բաղկանայ Պելժականատր բրոֆէսօրներէ¹⁶⁰: Միայն պէտք է ըսեմ[] յիսունէ աւելի թեկնածուներ արձանագր[ո]ւած են որոնց մասին յառաջիկայ Յունիսին միայն վարչութիւնը իր որոշումը պիտի տայ, ճշդիւ վերջ տրամադրելի թոշակներու թիւը: Բաց աստի, ըստ կանոնագրի, բժշկական, ինչպէս նաեւ իրաւագիտական, հողագործական եւ գեղարուեստական ուսանողներուն չէ որ կը տրուի նախապատ[ո]ւթիւնը, այլ գլխատրաբար երկրաչափներու, մեքենագէտներու, ելեքտրագէտներու, քիմիաբաններու եւ դասախօսներու:

Ինչ որ ալ ըլլայ, վստահ եղէք որ անձնապէս պիտի ընեմ ինչ որ ձեռքէս կուգայ»:

Այդ տողերից պարզ երեւում է, որ թոշակի հարցը այնքան էլ վստահ չէ: Նախ, եթէ այսօր 50ից [աւելի] արձանագր[ո]ւածներ կան, Մալեգեանը մոռանում է որ իմ գաւակս առաջիններէն էր: Ապա, ես փաստացի գիտեմ որ երբ Բարեգործականի վարչութիւնը ուզում է իր թեկնածուների թոշակը միշտ էլ յաջողացնում է: Գրած էի որ տղաս բժշկութիւն պիտի սովորի, այդ իր սիրած

առարկան է, սակայն, այն պարագային եթե այդ հանգամանքը ներկայանայ իբրեւ միակ արգելքը, նա պատրաստ է ընտրել ուրիշ, կանոնագրին աւելի համապատասխան մի ճիւղ:

Չեմ ուզում երեւակայել իսկ որ կարող են իմ զուկիս մերժել. այդ կ[ը] լինէր մի հար[ո]ւած ուղղ[ո]ւած իմ անձիս դէմ: Դուք շատ լաւ գիտէք իմ նիւթական դրութիւնս. ամէն զոհողութիւն անում եմ այդ մասին ոչ ոքի անհանգստութիւն չտալու համար, բայց զուակիս կրթութեան բեռը ուղ[ղ]ակի իմ ուժերէս վեր է եւ եթէ թոշակի հարցը չ'յաջող[ո]ւի՝ անել դրութիւն պիտի ստեղծ[ո]ւի: Անցեալ տար[ո]ւայ ձեր պնդումը իրաւացի էր. չ'ուզեցին լսել, ի՞նչ պատճառով...

Առ այժմ, ուրիշ բան չեմ կարող անել Բարեգործականին մօտ եղող բարեկամներին դիմել զատ եւ նախ եւ առաջ ձեզ: Բարի եղէք այդ մասին խօսել Մալեգեանի հետ եւ հարցը կտրուկ կերպով դնել: Պիտի ուզէի ժամ առաջ մի բան իմանալ. որպէսզի ըստ այնմ դասատրեմ իմ կեանքս. օր[ի]նակի համար մնա՞մ Վենետիկ թէ տեղափոխ[ո]ւեմ ուրիշ տեղ եւ այլն...

«Երեք երգերի» տպագր[ո]ւած օրինակը անշուշտ ստացած էր¹⁶¹: Իմ մասին ձեր գրած յօդ[ո]ւածը, որի համար շնորհակալութիւններս եմ յայտնում, ուշի ուշով կարդացի. միակ լուրջ քննադատականն է որ մինչեւ հիմա երեւցած է[,] թպէտ մի քանի կէտերի մէջ ես համաձայն չեմ ձեզ հետ¹⁶²:

Մնամ սիրով

Կ. ՉԱՐԵԱՆ

Բրիստի կոմիտէին ոչինչ չեմ գրել. չգիտեմ իսկ անհրաժեշտ է այդ անել թէ կ'բաւէ Մալեգեանին արած իմ դիմումներով...

L.¹⁶³

24-4-31

[Վենետիկ]

Միքելի Չօպանեան,

Այսօր Հ[այր] Երեմեանը¹⁶⁴ ինձ իմաց տ[ո]ւեց որ Մալեգեանից նամակ ստացած է թոշակի հարցի մասին, ուր ասում է որ երեք տարուց ի վեր ուրիշ սպասողներ կան եւ շատ յոյսեր չի տալիս տղիս յաջողութեան համար: Ի՞նչ ասել է այդ եւ ինչո՞ւ անցեալ տարի նա պնդում էր որ դիմումը վերջին բոլորին անենք...: Իբր թէ նաեւ ինձանից աւելի գէշ նիւթական վիճակի մէջ գտն[ո]ւողներ կան եղել. կարծես Մալեգեանը լաւ գիտի իմ դրութիւնս:

Ինչ որ է. պարտք եմ համարում ձեզ իմաց տալ այդ մասին. ձեզանից դուրս ուրիշ յոյս չկայ: Եթէ չ'յաջող[ո]ւի[,] ամէն բան կրկնապէս պիտի դժ[ո]ւարանայ ինձ համար եւ ստիպ[ո]ւած Վենետիկն էլ պիտի լքեմ:

Բարի եղէք. տեսէք ինչ կարելի է անել: Դա էլ Կիպրոս գնալու նման մի հարց դարձաւ¹⁶⁵:

Մնամ սիրով

Կ. ՉԱՐԵԱՆ

LU.¹⁶⁶

[Թուականը պատռուած է]

Միքելի Չօպանեան,

[...] տակաւին հաշիւների հարցը եւ մարդիկ կան որոնք փոքրիկ գութիւններ ունեն զուակներս պատասխանատու բռնելու իմ գաղափարների համար: Այդ

մասին եւ շատ անելին գիտեմ քան նրանք կարծում են եւ կը գայ օրը երբ այդ մասին կ[ը] խօսենք հրապարակով:

Յառում եմ տղոս համար. եւ անձամբ վարժ եմ հայ կեանքի այդ կոշտութիւններին եւ անարդարութիւններին: Գիտեմ այնպիսի թոշակ տուացողներ որոնք մերծում են իսկ իրենց հայ ասել եւ այնպիսիներ մաեւ որոնց համար ոչ թէ մէկ այլ եռեակ թոշակ սահման[ո]ւած է մէկ նամակով...: Ի՞նչ որ է... ձեր ջանքերն էլ ապարդիւն անցան:

Մնամ սիրով
Կ. ԶԱՐԵԱՆ

ԼԲ.¹⁶⁷

5-6-31

Վենետիկ

Սիրելի Զօպանեան,

Նամակը ստացայ թէ չէ դրկեցի վանք որպէսզի բարեկամներից մէկը գրէ կոմսուիուն¹⁶⁸: Շատ զգաց[ո]ւած եմ ձեր այդ իրական բարեկամական ընթացքի համար եւ Վահէն¹⁶⁹ էլ խնդրում է ինձ յայտնել ձեզ իր խորին շնորհակալութիւնները: Յուսանք որ այդքան ջանք ապարդիւն չի անցնի: Իմ գործերս շատ խառն են եւ քանի գնում անելի վատանում են: «Երեք երգերը» թողել եմ Մխիթարեաններին, Վիեննա, եւ ինչ կ[ը] լինի[] կ[ը] լինի: Ես անձամբ ի՞նչ կարող եմ անել ծախելու համար ու յայտնի է ինչպէս եմ առհասարակ ծախում հայ գրքերը:

Փուշմանը¹⁷⁰ գրել էր ինձ որ պիտի գայ Վենետիկ, բայց մինչեւ հիմա չէ եկած: Արդեօ՞ք որեւէ տեղեկութիւն ունիք նրա մասին. Փարիզ է թէ դեռ Ամերիկայումն է:

Շիրանգադէի հիւանդութեան լուրը շատ ցաւալի է: Չմայած իր բոլոր թերութիւններին, իրական գրական մեծ ուժ է եւ նրա կորուստը շատ զգալի պիտի լինի աղքատացող մեր հայ գրականութեան համար: Ի՞նչ գեղեցիկ գլուխ ունի եւ վերջերս գրած իր յիշողութիւնները, որ [մի] քիչ կարդացի ձեզ մօտ, վարպետի գործ էին¹⁷¹:

«Անահիտի» վերջին թիւը լեփ լեցուն էր կարեւորագոյ[ն] էջերով եւ հրատարակութիւնը քանի գնում շքեղանում է, մանաւանդ իր ուսումնասիրական մասի մէջ: Մտածե՛լ, որ մենք դեռ ոչինչ չգիտենք մեր անցեալ ար[ո]ւեստի, մեր երաժշտութեան եւ բանահիւստեան մասին: Պարապ գլխով մեր երիտասարդութիւնը ջուր է ծեծում, լրջօրէն աշխատութեան լծ[ո]ւելու տեղ¹⁷²: Այդ տեղ էլ սպասում են որ օտարները աշխատեն եւ իրենք փառաքանեն: Մախլաս¹⁷³...

Արդեօ՞ք այս տարի չպիտի ուզէիք Վենետիկ գալ. այստեղ էլ ծովը գեղեցիկ է եւ լութիւնը հանդարտեցուցիչ: Եթէ Փուշմանն էլ գար, միասին լաւ ժամանակ կ'անց[ը]նէինք:

Մնամ սիրով
Կ. ԶԱՐԵԱՆ

ԼԳ.¹⁷⁴

28-6-31

Վենետիկ

Սիրելի Զօպանեան,

Ընդհանրապես եմ ձեր տ[ո]ւած բարեկամական տեղեկութիւնների համար: Ես եւս մինչեւ վերջին վա[յ]րկեանը յոյս ունէի որ զաւակիս թոշակը չեն մերժեր. չէի ուզում մտածել որ այդքան դժ[ո]ւարութիւններին պիտի զան աւելանան նոր դժ[ո]ւարութիւններ եւս որոնք ինձ համար ուղ[ղ]ակի անել մի դրութիւն եմ ստեղծում: Մոսկալին այն է, որ եկող տարի միւս զաւակս էլ պիտի աւարտի¹⁷⁵ եւ նրա համար եւս ոչ մի յոյս չկայ գոնէ Բրիստելից: Չարմանալի է անշուշտ նրանց որոշումը թոշակ տալ միմիայն նրանց որոնք Կովկաս եւս աւարտել իրենց դպրոցական շրջանը: Թէ[] Հայաստանը եւ թէ[] Կովկասը ունեն համալսարաններ. բացի դրանից թէ[] Հայաստանի կառավարութիւնը եւ թէ[] Կովկասին¹⁷⁶ ունեն արտասահմանում թոշակատու ուսանողներ, մինչ այդ ամենից զրկ[ո]ւած է արտասահմանի հայութիւնը: Ո՞վ պիտի նրանց մտածի: Ու ի՞նչ է վերջապէս արտասահմանում ապրող հայ գրագէտի դրութիւնը. իր աշխատանքը չի վճարում, իր գրքերը չեն ծախում եւ իր զաւակները չեն կարող օգտ[ո]ւել փոքրիկ այն աջակցութիւններից որոնք տրուում են ամեն տեսակ վանեցիկներին¹⁷⁷: Չանագան Միքրդատեանները ինձ դէմ են, որովհետեւ ուզում են սիրաշահել սովետական հայ միջավայրը որի հետ ծխախոտի եւ ուրիշ ապրանքների վաճառականութիւնն են անում եւ իրենց քաղաքական եւ բարոյական սկզբունքները ամբողջովին կախ[ո]ւած են իրենց շահած ռուբլիներից: Դա արդարութի՞ւն է...

Ինչ որ է. հիմա տեսնենք Մարկոսեան կտակի¹⁷⁸ թոշակը ինչ պիտի լինի: Ամենայն դէպս այդ գումարը ինչպէս գրում էք այնքան քիչ է որ տղաս միմակ Միլան չպիտի կարողանայ ապրել, ուստի ստիպ[ո]ւած եմ ամբողջ ընտանիքով տեղափոխ[ո]ւել այնտեղ, ինչ որ նորից կապ[ո]ւած է շատ ծախսերի հետ¹⁷⁹: Այստեղ, իտալացի գրական շրջանակներում ուղ[ղ]ակի զայրացած են. ուզում էին նոյնիսկ հայ թերթերին բողոքի մի նամակ գրել. անշուշտ ես դէմ եղայ, առարկելով որ իմ հայ եղբայրակիցներս այդ ուղղութեամբ արդեն որոշում տուած են...

Ինչ որ գրում էք գրքերի տպագրութեան մասին՝ ճիշտ է, բայց այդպէս ուզեց Փուշմանը: Ինքը գնաց Վիեննա եւ ամեն ինչ կարգադրեց¹⁸⁰: Մինչեւ հիմա մի սանտիմ չեմ ստացած: Հարուստը աղքատին չի հասկանում... Ինչ վերաբերում է այն հարցին թէ պէտք է անձամբ դրկել. ո՞ւմ, ես ոչ ոքի չեմ ճանաչում եւ ոչ մի հասցէ էլ չ'ունեմ: Ահարոնեանը¹⁸¹ գրում է, որ հայ գրական միջավայրումն էլ մի տեսակ complot¹⁸² արած են գրքի շուրջը լռութիւն պահելու... Ի՞նչ խեղճ ազգ եւ ի՞նչ ստորին միջավայր:

Ընդհանրապէս կեանքս ուրախ չէ - քանի գնում քարդանում է:

Ես էլ կարծում եմ որ Փուշմանը եթէ մինչեւ հիմա չ'եկաւ էլ չպիտի գայ: Ուրախ եմ որ Շիրվանը լաւանալու վրայ է:

Նորից յայտնում եմ ձեզ իմ շնորհակալութիւններս ձեր արած քայլերի համար եւ ցատում եմ որ չպիտի կարողանաք Վենետիկ գալ:

Մնամ սիրով

Կ. ՉԱՐԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Վարդան Մատթեոսեան, «Կոստան Չարեանի եւ Արշակ Զօպանեանի Նամակներն», Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԻԷ., 2007, էջ 377-396:

- ² Գոհար Ազնաուրեան, «Կոստան Զարեանի Նամակներից», *Մովեստական Գրականություն*, 7, 1975, էջ 145-147:
- ³ Վարդան Մատթեոսեան, «Կոստան Զարեանի Նամակները “Երեք Երգեր” ու Առիթով», *Հանդես Ամսօրեայ*, Հտր. 1-12, 1993, էջ 245-247:
- ⁴ ԱԶՖ, քիւ 2131:
- ⁵ Կոստան Զարեան, *Օրերի Պսակը*, Կ. Պոլիս, Տպ. «Մահակեան», 1922:
- ⁶ Տե՛ս՝ Կոստան Զարեան, «Մանրանկարներ», *Վերածնունդ*, 1/14 Յունուար 1918, էջ 18-19. նաեւ՝ «Աղօթք», *Վերածնունդ*, 1 Մարտ 1918, էջ 106. նաեւ՝ «Չմտային», *Վերածնունդ*, 15 Մարտ-1 Ապրիլ 1918, էջ 133. նաեւ՝ «Մուգի Երգ», *Վերածնունդ*, 14 Ապրիլ 1918, էջ 180-181. նաեւ՝ «Գիշերը Տունս Պատել է...», *Վերածնունդ*, 14 Մեյստեմբեր 1918, էջ 360. նաեւ՝ «Մոռյալ Այս Միգում», *Վերածնունդ*, 14 Հոկտեմբեր 1918, էջ 403. նաեւ՝ «Պատկեր», «Ջինջ Օդումը», *Վերածնունդ*, 1-14 Նոյեմբեր 1918, էջ 424:
- ⁷ *Վերածնունդ*, (Փարիզ, 1917-1921)՝ հասարակական-գրական երկշաբաթաթերթ: Արշակ Զօպանեան զայն խմբագրած էր 1918-1919ին:
- ⁸ *Կավոջ* (Կ. Պոլիս, 1908-1926. Փարիզ, 1927-1936)՝ երգիծական պարբերաթերթ, խմբագիր՝ Երուանդ Թուլայեան:
- ⁹ *Շափղ* (Կ. Պոլիս, 1919-1922)՝ երգիծական պարբերաթերթ, խմբագիր՝ Երուանդ Օտեան:
- ¹⁰ Մեզի ծանօթ են նամակը կանխող քանի մը գրութիւններ *Շափղի* մէջ («Տարօրինակ Գիրք Մը», *Շափղ*, 3 Ապրիլ 1922, էջ 3. նաեւ՝ «Բանալի Օրերի Պսակի», *Շափղ*, 10 Ապրիլ 1922. նաեւ՝ Երուանդ Օտեան, «Իզմատ Աղա Գրական Քննադատ (Ինչ Օրերու Հասանք)», *Շափղ*, 10 Ապրիլ 1922, էջ 4): Նամակին յաջորդող օրերուն լոյս տեսած է գրախօսական մը՝ Վարդան Գեորգեան, «Օրերի Պսակը», *Շափղ*, 1 եւ 8 Մայիս 1922:
- ¹¹ Յակոբ Օշական (Քիւֆեան, 1883-1948)՝ արեւմտահայ վիպասան ու գրական քննադատ:
- ¹² Տե՛ս՝ Յակոբ Օշական, «Օրերի Պսակը», *Ճակատամարտ*, 9 Ապրիլ 1922, էջ 1-2:
- ¹³ *Բարձրավանք* (Պոլիս, 1922)՝ գրական հանդես Զարեանի, Օշականի, Թերեանի, Շահան Ռ. Պերպերեանի եւ Գեղամ Գաւաթեանի խմբագրութեամբ:
- ¹⁴ Վահան Թերեան (1878-1945)՝ արեւմտահայ բանաստեղծ ու քաղաքական գործիչ:
- ¹⁵ Ջապէլ Եսայեան (1878-1942)՝ արեւմտահայ վիպասանուհի:
- ¹⁶ Հայ Արուեստի Տան Պոլսոյ մասնաճիւղը բացուած էր Դեկտեմբեր 1921ին եւ յարատեւած՝ մինչեւ 1922ի վերջերը: Ըստ երեւոյթին, Զօպանեան ակնարկած է Փարիզի մէջ մասնաճիւղի ստեղծումին:
- ¹⁷ ԱԶՖ, քիւ 2132: Նամակը գրուած է 1922ի ուղղագրութեամբ:
- ¹⁸ Անցագիր, վիզա (ֆր.):
- ¹⁹ Հմմտ. մօտ երեք շաբաթ ետք հրատարակուած հետեւեալ լրատուութիւնը. «Բանաստեղծ Կոնստան Զարեան, որ Երեւանի կառավարութեան կողմէն պաշտօնով մը զրկուած էր եւ մտադիր էր Փարիզ այցելել, Ֆրանսական կառավարութեան կողմէն թոյլտուութիւն չ[ի] կրնար ստանալ» («Թոյլտուութիւն Չկայ», *Հայրենիք*, 26 Մեյստեմբեր 1924, էջ 2): Կարելի է ենթադրել, որ Զարեանի մինչ այդ Փարիզ հասած չլլալը առիթ տուած էր դաշնակցական շրջանակին այս տարածայնութիւնը տարածելու: Ինչպէս կը տեսնենք, նամակին բովանդակութիւնը կը հերքէ զայն:
- ²⁰ Միմոն Փիլոմեան (1889-1937)՝ Խորհրդային Միութեան Փարիզի դեսպանատան քարտուղար եւ Անդրկովկասեան Դաշնակցութեան ներկայացուցիչ:
- ²¹ Դանուշ Շահվերդեան (1879-1938)՝ Հայաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդի (Ժողկոմխորհ) Ներգաղթի Լիազօր:
- ²² Ըստ Զարեանի տուած տեղեկութիւններուն, «իրրեւ անդամ Հայաստանի Օգնութեան Կոմիտէին (ՀՕԿ), եւ իրրեւ գրականութեան դասախօս Հայաստանի Համալսարանի»:

րանին Եւրոպա կ'երթամ՝ ՀՕԿի յանձնախումբերուն հետ խորհրդակցութիւններ կատարելու եւ համալսարանին պէտքերը հոգալու համար: Առաջին առթիւ Իտալիա պիտի երթամ եւ կինս հոն ձգելով պիտի անցնիմ Ֆրանսա ու Անգլիա: Կը յուսամ թէ աշնան արդէն Հայաստան վերադարձած կ'ըլլամ» («Տեղեկութիւններ Հայաստանի Մասին», *Հայրենիք*, 22 Յուլիս 1924, էջ 4):

²³ ԱՉՖ, քիւ 2152: Երկտողը գրուած է 1922ի ուղղագրութեամբ:

²⁴ ԱՉՖ, քիւ 2154: Երկտողը գրուած է 1922ի ուղղագրութեամբ:

²⁵ ԱՉՖ, քիւ 2133: Երկտողը գրուած է *La Tour de Babel* հանդէսի այցետոմսին վրայ՝ *La Tour de Babel - Revue Mondiale de synthèse artistique et littéraire*:

²⁶ Կ'ակնարկէ *La Tour de Babel* հանդէսին, որուն միակ քիւր լոյս տեսած է Նոյեմբեր 1925ին: Անհիմն է այն մեկնաբանութիւնը, թէ «1925.8.8 տարեթուով հարցնում է խորհուրդ օրաթերթ հրատարակելու նպատակով (...)» (Ալմաստ Զաքարեան, *Եղիշէ Չարենց. Կեանքը, Գործը, Ժամանակը*, գիրք 3, Երեւան, «Ֆենոմէն» Հրատ., 2008, էջ 120):

²⁷ Հանդէսը առանձին հայկական մաս ունեցած չէ, սակայն հեղինակին ֆրանսերէն թարգմանութեամբ հրատարակած է Չօպանեանի մէկ պատմուածքը (Archag Tchobanian, "L'oubli Final", *La Tour de Babel*, Novembre 1925, էջ 50-53):

²⁸ ԱՉՖ, քիւ 2134:

²⁹ ԱՉՖ, քիւ 2156: Երկտողը գրուած *La Tour de Babel*ի այցետոմսին վրայ:

³⁰ ԱՉՖ, քիւ 2155:

³¹ Գորգ (թրք.):

³² ԱՉՖ, քիւ 2153: Երկտողը գրուած է երկլեզու (Կոստան Զարեան - Constant Zarian) այցետոմսի վրայ:

³³ Թուականի չգոյութեան պատճառով կարելի չէ պարզել, թէ ի՞նչ դասախօսութեան մասին է խօսքը:

³⁴ ԱՉՖ, քիւ 2135: Նամակը յղուած է հետեւեալ հասցէին՝ A. Tchobanian, Grand Hotel de la Plage, Le Tréport, Seine Inférieure:

³⁵ Նկատի ունի ընտանիքին ապրուստը եւ երկու որդիներուն կրթութիւնը, որոնք զիշերօքիկ էին Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ:

³⁶ ԱՉՖ, քիւ 2136:

³⁷ ԱՉՖ, քիւ 2137 (վենետիկեան տեսարան ցոյց տուող բացիկ):

³⁸ *Ապագայ* (1920-1939, 1944-1950)՝ ֆրանսահայ պարբերաթերթ, հրատարակութիւն՝ Ռամկավար Ազատական Կուսակցութեան: 1926-1931ին հրատարակուած է եռանդամ խմբագրական մարմնի մը կողմէ՝ Չօպանեան, Արտակ Դարբինեան եւ Աւետիս Թերզիպաշեան (Յովիկ Էօրտեքեան, *ՌԱԿ-ի Մամուլի Խմբագիրները*, Երեւան, «Տիգրան Մեծ» Տպ., 2005, էջ 29):

³⁹ ԱՉՖ, քիւ 2138:

⁴⁰ Թուականը ճշգրտած ենք ըստ դրոշմակնիքին:

⁴¹ ԱՉՖ, քիւ 2139:

⁴² *La Roseraie d'Arménie*, traduction précédée d'une étude et suivie des notes par Archag Tchobanian, tome 3, Paris, Ernest Leroux, 1929:

⁴³ *Անահիտ* (1898-1911, 1929-1940, 1946-1949)՝ ֆրանսահայ գրական-մշակութային հանդէս, Արշակ Չօպանեանի խմբագրութեամբ:

⁴⁴ Արշակ Չօպանեան, «Անահիտ Հանդէսի Նոր Երջանը. Արշակ Չօպանեան Իր Ծրագիրը Կը Կազմէ», *Ապագայ*, 2 եւ 5 Յունուար 1929:

⁴⁵ Նկատի ունի, օրինակ, *Գարուն* արձանախի (Մոսկուա, 1910-1913) փորձը:

⁴⁶ Նկատի ունի «Երեք երգեր Ասելու համար Վիշտը Երկրի եւ Վիշտը Երկնքի» վիպերգը (ըստ 1931ի հրատարակութեան խորագրին), որուն առաջին մասը՝ «Սիրվարդ», ենթախորագրուած էր «Խորհուրդ Չորս Մասով Ըստ Եղանակների Թաւալման»:

- ⁴⁷ Հայրենիք (1922-1970)՝ ամերիկահայ ամսագիր, ապա՝ եռամսեայ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հրատարակութիւն: Չարեան անոր աշխատակցած է ընդմիջումներով՝ 1925-1955ին:
- ⁴⁸ Կոստան Չարեան, «Երեք Երգեր Ասելու Համար Վիշտը Երկրի Ու Վիշտը Երկինքների. Սիրվարդ՝ Երկրի Աղջիկը», *Բարձրավանք*, Մարտ 1922, էջ 73-81, եւ Մայիս 1922, էջ 140-149:
- ⁴⁹ *Բարձրավանք* հանդէսը դադրած էր Յունիս 1922ին՝ քեմալական շարժումին առթած անորոշութեան պատճառով:
- ⁵⁰ Costant Zarian, *Tre Canti Per Dire I Dolori Della Terra E I Dolori Dei Cieli*, tradotto di T. A. Rosso, Lanciano, Carabba Editore, 1920.
- ⁵¹ Անգլերէն բարձրագոյնը լոյս տեսած չէ:
- ⁵² Գրուած է 1915ին:
- ⁵³ Այնարկուած առանձնատիպը կ'ընդգրկէր *Բարձրավանքի* մէջ լոյս տեսած երկու մասերը: Տե՛ս՝ Կոստան Չարեան, *Երեք Երգեր Ասելու Համար Վիշտը Երկրի Ու Վիշտը Երկինքների. Սիրվարդ՝ Երկրի Աղջիկը*, Կ. Պոլիս, Տպ. «Արգուման», 1922:
- ⁵⁴ *Անահիտի* մատենաշարը նիւթական պատճառներով իրականացած չէ:
- ⁵⁵ ԱԶՖ, քիւ 2140:
- ⁵⁶ Ըստ Զօպանեանի՝ Աւետիք Իսահակեանին ուղղած 1 Յունուար 1929 մամակին, *Անահիտի* պատուագինն էր «(...) մէկ տպագիր էջին մէկ տողար, առայժմ աւելի չեմ կրնար (...)» (Արշակ Զօպանեան, *Նամականի*, հատորը կազմեց եւ ծանօթագրեց Գոհար Ազնաւորեանը, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1980, էջ 177):
- ⁵⁷ Dollar (անգլ.):
- ⁵⁸ Առաջին քիւր լոյս տեսած է Մայիս-Յունիս 1929 քուագրումով:
- ⁵⁹ Հ. Գաբրիէլ Նահապետեան (1857-1939)՝ Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան անդամ, դաստիարակ ու քանատէր, 1929-32ին՝ Փարիզի Սամուէլ-Մուրատեան Վարժարանի հոգեւոր հայր:
- ⁶⁰ Տե՛ս՝ Չարեանի 2 Փետրուար 1918ի մամակը Զօպանեանին (Մատթէոսեան, «Կոստան Չարեանի եւ Արշակ Զօպանեանի», էջ 382)
- ⁶¹ ԱԶՖ, քիւ 2141:
- ⁶² ԱԶՖ, քիւ 2142:
- ⁶³ Կոստան Չարեան, «Քարը», *Անահիտ*, Մայիս-Յունիս 1929, էջ 8-13 (հմտ.՝ նոյն, *Նատառմար*, Երեւան, «Մարգիս Խաչենց», 1999, էջ 302-308):
- ⁶⁴ Կոստան Չարեան, «Տատրագոմի Հարսը», *Հայրենիք Ամսագիր*, Ապրիլ 1930: Նոյնը առանձին գիրքով՝ Կոստան Չարեան, *Տատրագոմի Հարսը*, Պոստըն, «Հայրենիք» Տպ., 1930:
- ⁶⁵ Հրանտ Նազարեանց (1884-1962)՝ իտալահայ քանաստեղծ:
- ⁶⁶ Չարեան կ'ակնարկէ այն իրողութեան, որ Նազարեանցի գործերուն շուրջ իտալացի գրագէտներու չափազանցուած անդրադարձները համապատասխան չէին հայ գրականութեան մէջ ունեցած դիրքին:
- ⁶⁷ Այս տեղեկութիւններէն քաղուածք մը տե՛ս՝ Արշակ Զօպանեան, «Քրոնիկ», *Անահիտ*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1930, էջ 107:
- ⁶⁸ Constant Zarian, "Tre Canti Per Dire I Dolori Della Terra E I Dolori Del Cieli", poema tradotto dall'Armeno da Alessandro Rosso, *L'Eroica*, VIII-X, 1915 [1916], էջ 310-389: Համարը նուիրուած էր Հայաստանի եւ կը սկսի խմբագիր Էթորէ Բոցանիի ներածական յօդուածով՝ «Արեւելի Հոսմեացիները»: Ամսագրի կողքին վրայ գրուած է, թէ *«այս հատորը, պատերազմի պատճառով, ուշացուածով լոյս կը տեսնէ Յունիս 1916ին»*: Այս միացեալ համարին կողքը Չարեանի վիպերգին մէկ նկարագարողումն էր, գործ՝ պելճիքացի նկարիչ Շարլ Տուտըլի: Վիպերգը նկարագարողուած էր իտալացի արուեստագէտներ Ամերիկո Պարթուլիի եւ Էնրիքօ Փրամփոլիմիի փորագրութիւններով:

- ⁶⁹ Ամսագիրը իր առաջին շրջանին լոյս տեսած է Լա Սպեցիայի մէջ, իսկ երկրորդ շրջանին փոխադրուած է Միլանո:
- ⁷⁰ *L'Eroica* (1911-1921, 1924-1944)՝ իտալական գրական-գեղարուեստական ամսագիր: Խմբագիր՝ Էթթորե Բոցանի:
- ⁷¹ Constant Zarian, *Tre Canti Per Dire I Dolori Della Terra E I Dolori Del Cielì*, La Spezia, L'Eroica, 1916.
- ⁷² Ճինո Քարապալա (1876-1944)՝ իտալացի հրատարակիչ: Տե՛ս՝ *La Casa Editrice Carabba E La Cultura Italiana Tra Otto E Novecento*, a cura di Gianni Oliva, Roma, Bulzoni, 1999:
- ⁷³ Մատենաշարը կը կոչուէր «Scrittore Italiani E Stranieri» (Իտալացի եւ օտար գրողներ) եւ կ'ընդգրկէր նշանաւոր հեղինակներու գործեր: 1921ին այդ մատենաշարէն լոյս տեսած է *Canti Popolari Armeni* հատորը (Հայ ժողովրդական երգեր - a cura di Domenico Ciampoli, Lanciano, Carabba Editore, 1921): Թարգմանիչը՝ յայտնի սլավագետ Տոմենիքո Չամփոլին (1852-1929), Չօլանեանի բարեկամ էր ու հատորը թարգմանած էր վերջինիս՝ 1903ին ֆրանսերէն լոյս տեսած համանուն հատորէն (տե՛ս՝ Aldo Ferrari, *L'Ararat E La Gru: Studi Sulla Storia E La Cultura Degli Armeni*, Milano, Mimesis, 2003, էջ 219-226):
- ⁷⁴ Այս տեղեկութիւնը թիրիմացութիւն մըն է. 2 Ապրիլ 1932ին Չարեանին ուղղուած իր նամակին մէջ, հրատարակչատան սեփականատէր Ճինո Քարապալան կը մատնանշէր. «Dopo la prima edizione del 1920 fatta da me dei suoi 'Tre canti', il volume non venne più ristampato. (...) Non è esatto quello che ella mi scrive di aver io 'continuata in diverse riprese la pubblicazione del volume'» («**Չեր 'Երեք երգեր' ու՝ 1920ին իմ կատարած առաջին հրատարակութենէն ետք, հատորը այլեւս վերատպուած չէ: (...) Ճիշդ չէ ինչ որ կը գրէք, որ ես տարբեր առիթներով շարունակած եմ հատորին հրատարակութիւնը**» (ԳԱԹ, Կոստան Չարեանի ֆոնտ, թիւ 45. ընդգծումը՝ բնագրային):
- ⁷⁵ Ճիշդը՝ 1921ին, ըստ Ռեսփիկիի 28 Մայիս 1921 թուակիր նամակին, ուղղուած՝ Չարեանին (Vartan Matiossian, «Ottorino Respighi E Gostan Zarian. Lettere Inedite», *Բազմալեւոյ*, ԾԾԴ. տարի, թիւ 1-4, 1996, էջ 297. հոս հրատարակուած են Ռեսփիկիի հինգ անտիպ նամակները Չարեանին):
- ⁷⁶ Օթթորինո Ռեսփիկի (1879-1936) իտալացի երգահան: Չարեանի եւ Ռեսփիկիի յարաբերութեան մասին, տե՛ս՝ Եւրի Խաչատրեան, «Օտտորինո Ռեսպիգիին Եւ Կոստան Չարեանը», *Նորք*, 4, 1997, էջ 100-112 (ներառած է Ռեսփիկիի չորս նամակներու հայերէն թարգմանութիւնը, կատարուած՝ Արմէն Չարեանի կողմէ). Վարդան Մատթեոսեան, *Կոստան Չարեանի Շուրջ (Ուսումնասիրութիւն)*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի, 1998, էջ 141-149:
- ⁷⁷ «Երգչախումբ, նուագախումբ, մեներգեր» (Ֆրանս.): Ռեսփիկիի ստեղծագործութիւնը «Գարուն», միայն կ'ընդգրկէ վիպերգին առաջին մասը:
- ⁷⁸ Ըստ մեր հաւաքած տեղեկութիւններուն, 1923-1926ին «Գարուն»ը ներկայացուած էր միայն Հոռնի, Էնն Արպըրի (Միշիկըն, ԱՄՆ) եւ Պերլինի մէջ (Մատթեոսեան, *Կոստան Չարեանի Շուրջ*, էջ 148): Չիմշիմաթի ու Լայփցիկ կայանալիք համերգերու լուրը բխած է Ռեսփիկիի 1921ի վերոյիշեալ նամակէն, բայց այդ համերգերը չեն կայացած:
- ⁷⁹ Ռեսփիկիի գործը լոյս տեսած է իտալերէն բնագրով եւ գերմաներէն թարգմանութեամբ:
- ⁸⁰ Երաժշտական հռչակաւոր հրատարակչատուն (հիմնուած՝ 1901ին, Վիեննա): Անոր անփոփոխ կեդրոնները եղած են Վիեննան եւ Նիւ Եորքը:
- ⁸¹ Ottorino Respighi, *La Primavera*, poema lirico per soli, coro, orchestra ed organo / *Frühling*, lyrische dichtung für Solo, Chor, Orchester und Orgel. Dichtung von Constant Zarian, Deutsche Übertragung von R. St. Hoffman, Wien-New York, Universal Edition A. G., 1922.

- ⁸² Միս մասնակի ցանկ մը այդ յօդուածներուն. Renzo Levi Naim, "Come Fu Che Cercando Un Pittore Belga Trovai Un Poeta Armeno", *Il Nuovo Giornale*, 25 luglio 1916. "Un Grand Poète Arménien. Constant Zarian", *L'Italie*, 31 juillet 1916. նաև՝ "L'Armenia Nel Canto Del L'Eroica", *Giornale dell'Isola*, 2 agosto 1916. "Per l'Armenia", *Il Popolo d'Italia*, 8 agosto 1916. V. "All'Armenia", *L'Idea Nazionale*, 9 agosto 1916. Charles Doudelet, "Un Poeta Armeno: Constant Zarian", *Il Piccolo*, 22 agosto 1916. Angelo Piccioli, "La Sinfonia Delle Anime", քերթն ու բուականը յայտնի չեն. Tigi, "La Musa Insanguinata", քերթն ու բուականը յայտնի չեն (երկուքն ալ 1916էն են): Յօդուածներուն կտրօնները կը գտնուին Կոստան Զարեանի անձնական արխիւին մէջ (ծառանգներուն մօտ):
- ⁸³ Իլ Փոփոլօ տ'Իթալիա *Il Popolo d'Italia* (1914-1943) Պ. Մուսոլինիի հիմնաւոր խմբագրած օրաթերթը, որ 1918էն ետք Իտալիոյ Ֆաշական Կոսակցութեան պաշտօնաթերթը դարձաւ:
- ⁸⁴ Պենիթօ Մուսոլինի (1883-1945) Իտալիոյ ֆաշական մենատէր 1922-1943: «(...) որ այն ժամանակ խմբագրուած էր ինքը Մուսոլինին (...)» խօսքը կրճատուած է Ազնաւորեանի հրապարակումէն (Ազնաւորեան, «Կոստան Զարեանի», էջ 146):
- ⁸⁵ Կ'ակնարկէ հետեւեալ հաստատումին. «Մարդիկ որոնք Կոստան Զարեանի նման բանաստեղծներ ունին՝ հասուն են իրենց ճակատագիրը տնօրինելու համար» ("Per l'Armenia", *Il Popolo d'Italia*, 8 agosto 1916):
- ⁸⁶ Ատա Նեկրի (1870-1945) իտալացի բանաստեղծուի:
- ⁸⁷ Ըստ յառաջաբանին, Նեկրի գրած էր Զարեանին. «Մէջ տուն մը, ո՛չ բառ մը, ո՛չ ներդաշնակութիւն մը կարելի է մոռնալ հրաշալի այն վիպերգէն, զոր դուք տուած էք մարդոց՝ իրենց տիեզերական սէրն ու խորհրդապաշտ ծարաւը սնուցանելու համար: «Գարունը», «Զայներ Եկեղեցում», «Աստղերի Քերթնումը» աստուածային մաքրութեան գեղեցկութիւններ կը նուաճեն» (Zarian, *Tre Canti*, p. 1): «(...) եւ պէտք է երախտապարտ լինել հեղինակին մարդկութեան տուած իր նուէրի համար» խօսքերը մէջբերուած չեն յառաջաբանին մէջ (հմմտ.՝ Խաչատրեան, «Օտտորինօ Ռեսայի-գին» էջ 104, որ լման պարբերութիւնը քարգնանաւ է, ընդգրկելով այս խօսքերը որպէս անոր մէկ մասը):
- ⁸⁸ Շոգուն Բարտուլի (1835-1907) իտալացի բանաստեղծ, 1906ի Նոպէլեան մրցանակակիր: 1859-1903ին Պոլոնիոյ Համալսարանի Գականութեան Ամպիոնի վարիչ եղած է:
- ⁸⁹ Շոփանի Փաքոլի (1855-1912) իտալացի բանաստեղծ, Բարտուլիի աշակերտ եւ անոր յաջորդը՝ Պոլոնիոյ Համալսարանի Գրականութեան Ամպիոնին մէջ (1903-1912):
- ⁹⁰ Ալֆրետօ Կալեքի (մահ. 1962) իտալացի գրականագէտ: 1914ին յաջորդած է Շոփանի Փաքոլիին որպէս Պոլոնիոյ Համալսարանի Գրականութեան Ամպիոնի վարիչ: 1918ին մաս կազմած է Զարեանի կազմակերպած Հայաստանի անկախութեան կոմիտէին:
- ⁹¹ Փրքսի Պիշի Ենլի (1792-1822) անգլիացի վիպապաշտ բանաստեղծ:
- ⁹² Միկէլ Տէ Ունամունօ (1864-1936) սլաւոնացի վիպասան, համալսարանի դասախօս ու հրապարակագիր: Զարեանի եւ Ունամունօյի յարաբերութեան մասին, տես՝ Մատթեոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 326-349:
- ⁹³ Տետչը (Ֆրանս.):
- ⁹⁴ Վինցենթի Լուքսուսկի (1863-1954) լեհ փիլիսոփայ ու լեզուաբան: 1916-1919ին դասախօս եղած է Փարիզի Համալսարանին մէջ, իսկ 1920-1933ին՝ Վիլնայի (Լիթւանիա) Համալսարանի ամպիոնի վարիչ:
- ⁹⁵ Իրէն Ալեքսանտր՝ ամերիկացի արձակագիր ու բանաստեղծուի:
- ⁹⁶ Միլենոյնն է (Ֆրանս.):

⁹⁷ ԱԶՖ, քիւ 2143:

⁹⁸ Կ'ակնարկէ կնոջ՝ Թագուհիին (1887-1962), ու աղջկան՝ Նուարդին (1917-2005), որոնք 1929-1930ին Թրանսիլվանիա ապրած են:

⁹⁹ Չարեան պարսկական անցագիր ուներ:

¹⁰⁰ Կ'ակնարկէ պոլսահայ երեք գրագիտուհիներու արձակ գործերուն, որոնք տեղ գտած են առաջին քիւին մէջ. Անայիս, «Շարժանկար», *Անահիտ*, Մայիս-Յունիս 1929, էջ 19-20. Չարուհի Գալեմբարեան, «Ժողովակիս Հետ», էջ 23-24, եւ՝ Մաննիկ Պէրպէրեան, «Արձակ Քերթուածներ», էջ 27-28:

¹⁰¹ Հմմտ.՝ հետեւեալ ակնարկութիւնը *Անցորդը եւ իր ճամբան* մէջ. «Ահա ինչու, Պոլսում, կանայք գրականութիւն են մշակում, եւ զգում են իրենց ինչպէս Սիոնում: / Քաղաքը կին է՝ օրգանապէս թերի, մշտնջենապէս վիրաւորուած եւ գերազանցօրէն սիրական: / Ուստի՝ ստորին» (Կոստան Չարեան, *Երկեր*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի, 1975, էջ 39):

¹⁰² Անայիս (Եսփիմէ Աւետիսեան, 1872-1950)՝ պոլսահայ բանաստեղծուհի, ապա տեղափոխուած Ֆրանսա:

¹⁰³ Հայ Կին (1919-1933)՝ պոլսահայ կիսամսեայ հանդէս, խմբագիր՝ Հայկանոյշ Մառք: «(...) մանաւանդ կանայք՝ Պոլսից ժայթքած անուշ այդ թուրք Բոլոր այդ Անա[յ]իսները եւ այլն՝ խոտով լեց[ո]ւած դուժակների գրականութիւն են մշակում, որոնցից պէ՛տք է ազատագր[ո]ւել: Ի զուր չէ որ Օսմանեան Կայսրութիւնից մնացել է Պերա[յ]ի ցեխը եւ «Հայ Կինը» հատուածը կրճատուած է Ազնաւորեանի հրապարակումին մէջ (Ազնաւորեան, էջ 146):

¹⁰⁴ ԱԶՖ, քիւ 2144: Նամակին մէկ մասը պատռուած է, ուստի փակագիծերով նշած ենք մեր վերականգնած բաժինները:

¹⁰⁵ Այդ մասին տե՛ս նաեւ՝ այս հատորին մէջ տեղ գտած Վաչէ Ղազարեանի հրապարակումը:

¹⁰⁶ Վահան Մալեգեան (1871-1966)՝ արեւմտահայ բանաստեղծ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան երկարամեայ վարիչ-քարտուղար:

¹⁰⁷ Չարեանի «Երեք Երգեր»-էն որեւէ հատուած լոյս տեսած չէ *Անահիտ*ի մէջ: Հանդէսի չորրորդ քիւին մէջ տպուած է «Հրատարակ[ո]ւելիք պոեմից Երգ երգի մի հատ[ո]ւած» ծանօթագրութեամբ բանաստեղծութիւն մը, որ սակայն կապ չունի «Երեք Երգեր»ուն հետ (Կոստան Չարեան, «Նոտր Դամի Քիմերան (հատուած)», *Անահիտ*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1929, էջ 37-38):

¹⁰⁸ ԱԶՖ, քիւ 2145:

¹⁰⁹ ԱԶՖ, քիւ 2146:

¹¹⁰ Ամենայն հաւանականութեամբ կ'ակնարկէ երաժշտագէտ ու դաշնակահարուհի Մարգարիտ Բաքայեանին (1874-1968):

¹¹¹ ԱԶՖ, քիւ 2147:

¹¹² ԱԶՖ, քիւ 2148:

¹¹³ ԱԶՖ, քիւ 2149:

¹¹⁴ Այսինքն՝ հանդէսի չորրորդ՝ Նոյեմբեր-Դեկտեմբեր 1929ի քիւլը:

¹¹⁵ ԱԶՖ, քիւ 2151:

¹¹⁶ Նոր Ուղի (1929-1932)՝ խորհրդահայ գրական-գեղարուեստական, քաղաքական ամսագիր:

¹¹⁷ ԱԶՖ, քիւ 2150:

¹¹⁸ ԱԶՖ, քիւ 2157:

¹¹⁹ Նամակը պէտք է գրուած ըլլայ 12 Հոկտեմբեր 1930էն առաջ, երբ վենետիկեան յիշեալ հասցէէն Չարեան ցարդ յայտնի իր առաջին նամակը գրած է Յովսէփ Փուշմանին, առանց ակնարկելու ընտանեկան հարցերու (Մատթէոսեան, «Կոստան Չարեանի Նամակները», էջ 249):

- ¹²⁰ Տե՛ս՝ Արշակ Զօպանեան, «Քրոնիկ», *Անահիտ*, Յուլիս-Օգոստոս 1930, էջ 111: Քրոնիկին վերջին պարբերութիւնն է, որպէս նախաքան յաջորդ քիւին մէջ անոր շարունակութեան՝ «Տատրագոմի Հարսը»-ի մասին. «[Հ]օգրագոյն արտադրութիւնն է որ մեր ժամանակակից քերթութեան մէջ կը յայտնուի Սիամանթօի եւ Վարուժանի արուրէ մեծահունչ քնարներուն լուկէն ի վեր»:
- ¹²¹ Կ'ակնարկէ այն իրողութեան, որ դաշնակցական տեսակետերուն կը ծանօթանար՝ Պոստոմի Հայրենիք օրաթերթի միջոցաւ:
- ¹²² ԱՉՖ, քիւ 2158:
- ¹²³ Խօսքը կը վերաբերի անդրանիկ գաւակին՝ Վահէ Զարեանին (1913-1985), որ 1931ին Մուրատ-Ռափայելեան Վարժարանը պիտի աւարտէր եւ որուն համար համալսարանական կրթաթոշակ կը փորձէր ապահովել: Վ. Զարեան հետեւած է քաղաքական գիտութիւններու, ապա՝ բժշկութեան եւ արուեստի:
- ¹²⁴ Մաքսուտ Միհրդատեան (1874-1956)՝ ճարտարապետ, ՀԲԸՄի անդամ:
- ¹²⁵ Զօպանեան Կիլիկիա այցելած էր 1920-21ին՝ Ազգային Պատուիրակութեան հետ կապուած առաքելութեամբ:
- ¹²⁶ Զօպանեան Հայաստան այցելած է Դեկտեմբեր 1932ին՝ որպէս պատգամատուր կաթողիկոսական ընտրութիւններուն:
- ¹²⁷ Կոստան Զարեան, «Անցորդը եւ Իր Ծամբան», *Հայրենիք Ամսագիր*, Հոկտեմբեր 1926-Փետրուար 1928 (հմմտ. նոյն, *Երկեր*, էջ 9-360):
- ¹²⁸ Հաւանաբար կ'ակնարկէ Զօպանեանի՝ *Անցորդը եւ Իր Ծամբան* մասին կատարած հետեւեալ քննադատութեան. «Երգիծական բաժինը, Խ. Հայաստանի քաղաքական ու մտաւոր գրեթէ բոլոր ղեկավարներուն - եւ ամբողջ բեթիմին - դէմ ուղղուած, կրքոտ կողմնակալութեամբ տողորուած էր եւ անարդարութիւններով լի, ինչքան որ զուտ գրական ձեւի տեսակետով շահեկան. Հայաստանի աթմեան բեթիմին ու վարիչներուն թերութիւնները չափազանցուած էին, եւ դրական կողմերը բոլորովին անտեսուած» (Զօպանեան, «Քրոնիկ», էջ 108):
- ¹²⁹ Զարեան Հայաստան ապրած էր Նոյեմբեր 1922էն մինչեւ Յունիս 1924:
- ¹³⁰ Գուրգէն Մահարի (Աճեմեան, 1903-1969)՝ խորհրդահայ բանաստեղծ եւ արձակագիր:
- ¹³¹ Գուրգէն Մահարի 1929ին Փարիզի *Երեսան* երկօրեային մէջ Զարեանի դէմ նամակ մը գրած էր՝ *Անահիտ*ի առաջին քիւին «Քարը»-ի առիթով, ուր մասնատրապէս կ'ըսուէր. «Գրականագէտ Արշակ Զօպանեանն իր «Անահիտ» ամսաթերթում, «Երկրի գրողներու ձայնն ալ խառնած ըլլալու համար պանդուխտ հայութեան ձայնին», «Նոր Ուղի» ամսագրի էջերից արտատպել է մեր բանաստեղծութիւնները: «Երկրի գրողները» երբեք դէմ չեն եղել «Իրենց ձայնը խառնելու» արտասահմանեան ձայնին, բայց հրաժարուելով հրաժարուում են ձայնակցել մի այնպիսի «պանդուխտ հային», որպիսին է տխրահռչակ Կ. Զարեանը, որը նոյնպէս մեծահոգաբար հիւրընկալուել է «Անահիտ»ի էջերում: «Զարեանի հերթական խուլիգանական ելոյթը «Անահիտ»ի էջերում Խորհրդային Հայաստանի դէմ՝ ամէնեւին չի ապահովում «Երկրի գրողներու» բարեկամական յարաբերութիւններն այդ ամսաթերթի հետ, որն ստանձնել է անյաջող միջնորդի դեր «Երկրի գրողներուն» եւ «պանդուխտ հայութեան» անուան տակ - արտասահմանեան հայ բուրժուազիայի լակէյ Կ. Զարեանի միջեւ: Մի ժամանակ իր բուրժ գրիչով Խորհրդային Հայաստանի անունով երդուող, իսկ այժմ, արտասահմանի հայկական դեղին մամուլի շուկաներում նոյն այդ գրիչի վաճառքով զբաղած Կոստան Զարեանի անունը չի կարող համատեղուել եւ ոչ մի մամուլում»:
- Մէջքերելով այս հատուածը, Հայրենիք օրաթերթը խմբագրականի մը մէջ կը նշէր, թէ «Կ. Զարեանը երբեմն իր «բուրժ» գրիչով Խորհրդային Հայաստանի անունով կ'երդուէր, իսկ այժմ ազատ աշխարհի մէջ Հայաստանի վարիչներուն կատարած

խեղկատակութիւնները կը ձաղկէ: Ու ասիկա անհամատեղելի է Չեկայի առջեւ բարեւի կեցողներուն համար» («Ի Պէտս Չարգացելոց...») (խմբագրական), Հայրենիք, 27 Օգոստոս 1929, էջ 4):

Մահարի խորհրդային Հայաստան օրաթերթի գրական-գեղարուեստական յաւելումին մէջ (Գուրգէն Մահարի, «Էպիգրամներ», Արուստի ֆրոնտ, 15 Նոյեմբեր 1930, թիւ 1) նաեւ հրատարակած էր Կոստան Չարեանին դէմ ուղղուած կծու էպիգրամ մը, իսկ նոյն թերթի թիւ 3ին մէջ (15 Դեկտեմբեր 1930)՝ «Արշակ Չօպանեան» էպիգրամը, ուր յարձակում կար թէ՛ Չօպանեանի եւ թէ՛ Չարեանի դէմ. «Կոստան Չարեան/ Իր ուղին ունի, / Նորենցը իր, / Ալեհեր պատանի, / Դու էլ քո՛ ուղին: / Լաւ է տգէտ լինել, / Լինել անմիտ, / Անուս, / Քան փոթորկոտ / Մեր այս դարում / Գիտնական եանուս» (տե՛ս՝ Գուրգէն Մահարի, *Երգիծանք եւ Հումոր*, աշխատասիրութեամբ Գրիգոր Աճեմեանի, Երեւան, «Ապոլոն» Հրատ., 2004, էջ 79-80): Չարեանի դէմ գրուած էպիգրամին մասին, որ նախապէս արտատպուած էր նոյն թերթին մէջ, տե՛ս՝ *Յառաջ*, 7 Դեկտեմբեր 1930:

Ըստ դերասան Մանուէլ Մարութեանի վկայութեան, որ 1921էն ետք այլեւս արտասահման էր, բայց որուն եղբայրը՝ Բարգմանիչ Լեւոնի Մարութեանը, Հայաստան կ'ապրէր. «*Չարեանը երբ գրեց «Տատրագոմի հարսը», Մահարին գրեց հետեւեալը. «Ասում են թէ՛ մտել ես, Չարեան Կոստան / Դաշնակցութեան քանդուած պոստան, / Գրել ես Տատրագոմի հարսի մասին, / Դու դատարկ դոմի փեսայ, / Կարդացի այդ ու տեսայ...»* (Մանուէլ Մարութեան, *Նայիրի*, Դեկտեմբեր 1947-Յունուար 1948, էջ 618): Մահարիի այս էպիգրամին աղբիւրը չենք կրցած գտնել:

¹³² Արտաշէս Կարիմեան (1886-1982)՝ խորհրդահայ կուսակցական գործիչ եւ գրականագետ:

¹³³ Տե՛ս՝ նաեւ Դրաստամատ Սիմոնեան, «Մի Քանի Դիտողութիւններ «Անահիտ» Հանդէսի Մասին», *Երեւան*, 31 Յուլիս 1929, էջ 2, ուր յատկապէս քննադատուած է Չօպանեանը իր կարծիքին համար, թէ՛ «կարող է հաշտեցնել անհաշտելին եւ իր հանդէսին մէջ մերձեցնել իրար բացասող բեւեռները»: Որպէս օրինակ տրուած են Վահրամ Ալազանն ու Թէրեւեանը եւ Ազատ Վշտունին ու Կոստան Չարեանը, որ այլեւայլ քննադատական պարբերու ենթարկուած է նաեւ:

¹³⁴ Վահան Թորոպեան (1889-1938)՝ խորհրդահայ գրագետ:

¹³⁵ Հմմտ.՝ «Կ. Չարեանի մի գրութիւնը» վերապատմող հետեւեալ մէջբերումը, որուն աղբիւրը թերեւս հրատարակուող սոյն նամակը ըլլայ. «... 1925ին [իմա՝ 1924ին - Վ.Մ.], երբ ինքը մեկնում էր Հայաստանից, նրան հրաժեշտ տալու է գալիս Թորոպեանը եւ ասում՝ Կոստան, գնում ես, գիտեմ, որ չես վերադառնալու: Մի բան եմ խնդրում եւ խնդրում եմ, որ լաւ յիշես. մեր անունից ինչ էլ կարդաս քո հասցէին, չգարմանս ու չհաւատաս: Դու լաւ գիտես, թէ ինչ երկրում եւ ինչ պայմաններում ենք ապրում» (տե՛ս՝ Նորայր Աղալեան, *Թորոպեան*, Երեւան, [առանց հրատարակիչի], 1994, էջ 261, որ կը յղէ Եւրի Խաչատրեանի յօդուածին, *Ազատամարտ*, 1993, թ. 4.):

¹³⁶ *Նորք* (1922-1928, ընդմիջումներով)՝ խորհրդահայ գրական-գեղարուեստական, քաղաքական հանդէս:

¹³⁷ Կակնարկէ Բարգմանիչ ու բանասէր Մամիկոն Գեորգեանին (1877-1962):

¹³⁸ Լէօ (Առաքել Բաբայանեան, 1870-1935)՝ արեւելահայ պատմաբան ու գրականագետ:

¹³⁹ *La Roseirie d'Arménie*, traduction précédée d'une étude et suivie des notes par Archag Tchobanian, tome 2, Paris, Ernest Leroux, 1923.

¹⁴⁰ Աշոտ Յովհաննիսեան (1887-1972)՝ խորհրդահայ պատմաբան եւ կուսակցական գործիչ: 1923-1924ին *Նորքի* խմբագրութեան անդամ էր:

- ¹⁴¹ Տե՛ս՝ Կոստան Չարեան, «Վարդաստան», *Նորը*, գիրք 4, 1924, էջ 285-290 (հմմտ.՝ Նոյն, *Դէպի Արարատ*, Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 281-288):
- ¹⁴² Հայաստանի Կոչնակ (1899-1968)՝ ամերիկահայ շաքաթաթերթ (1960ականներուն ամսաթերթ), հայ աւետարանական հրատարակութիւն: Լոյս տեսած է «Կոչնակ», «Կոչնակ Հայաստանի» եւ «Հայաստանի Կոչնակ» անուններով:
- ¹⁴³ *Խորհրդային Հայաստան* (1921-1990)՝ Հայաստանի Համայնավար Կուսակցութեան օրաթերթ: 1940-1989ին անուանուած է «Սովետական Հայաստան», իսկ 1989-1990ին վերստին դարձած է «Խորհրդային Հայաստան»: 1990էն ետք կոչուած է «Հայաստան» ու 1992ին վերածուած՝ անկախ օրաթերթի:
- ¹⁴⁴ Ամտեղեակ (թրք.):
- ¹⁴⁵ Ամենայն հաւանականութեամբ կ'ակնարկէ դերասան ու քննադիշ Ալեքսանդր Արելեանին (1865-1936):
- ¹⁴⁶ Կ'ակնարկէ իր հօր՝ Խաչատուր րէկ Եղիազարեանին (մահ. 1890ին), որուն անունը յաճախ տրուած է իբրեւ Քրիստափոր (տե՛ս՝ Մատթէոսեան, *Կոստան Չարեանի Շուրջ*, էջ 23-24):
- ¹⁴⁷ Ալեքսանդր Շիրվանզադէ (Մովսիսեան, 1858-1935)՝ արեւելահայ վիպասան եւ թատերագիր: Արելեան եղբայրներն ու Շիրվանզադէ երկու քոյրերու զաւակներ էին:
- ¹⁴⁸ Չարեանի մօր անունը Սոնա Ստեփանեան (Քամալեան) էր (տե՛ս՝ Մատթէոսեան, *Կոստան Չարեանի Շուրջ*, էջ 24-25):
- ¹⁴⁹ Կ'ակնարկէ Արելեանի եղբայրներուն՝ հանրային գործիչ Ներսէս Արելեանին (1855-1933) եւ թատերագիր Յովհաննէս Արելեանին (1858-1940):
- ¹⁵⁰ 1928-1935ին Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան ընդհանուր արքահայրն էր Հ. Յովհան Վրդ. Ազեբը (1877-1947):
- ¹⁵¹ Խմբակ (ֆրանս. clique):
- ¹⁵² Երուանդ Արսլան (1865-1948)՝ իտալահայ բժիշկ, Մուրատ-Ռափայելեան Վարժարանի շրջանաւարտ:
- ¹⁵³ Երանաւորներ (իտալ. cardinale):
- ¹⁵⁴ Մուրատ-Ռափայելեան Վարժարանի Սանուց Միութիւն:
- ¹⁵⁵ Էտկար Շահին (Շահինեան, 1874-1947)՝ ֆրանսահայ գեղանկարիչ:
- ¹⁵⁶ Կոստան Չարեան, *Երեք Երգեր Ասելու Համար Վիշտը Երկրի եւ Վիշտը Երկնի*, Վիեննա, Միսիթարեան Տպ., 1931:
- ¹⁵⁷ Տե՛ս՝ «Ստացանք», *Անահիտ*, Յունուար-Ապրիլ 1931, էջ 192:
- ¹⁵⁸ ԱԶՖ, քիւ 2159:
- ¹⁵⁹ ՀԲԸՄի տնօրինումին տակ գտնուող ու Միութեան հիմնադիրներէն Պօղոս Նուպար փաշայի կողմէ 1924ին հաստատուած ուսանողական հիմնադրամ, որուն կեդրոնը Պրիքսէլ է:
- ¹⁶⁰ Ըստ *Ապագայի* լրատուութեան, տնօրինումը կը կատարէր հինգ հոգիներ խումբ մը, որ կազմուած էր ՀԲԸՄի երկու ներկայացուցիչներէ, Պ. Նուպարի հաստատած Համալսարանական Հիմնարկութեան երկու ներկայացուցիչներէ եւ Նուպար ընտանիքի մէկ ներկայացուցիչէ (արտատպումը տե՛ս՝ «Պ. Պօղոս Նուպարի Համալսարանական Հիմնարկութիւնը», *Հայրենիք*, 18 Մայիս 1924, էջ 2):
- ¹⁶¹ Տե՛ս՝ Արշակ Զօպանեան, «Քրոնիկ», *Անահիտ*, Յունուար-Ապրիլ 1931, էջ 186:
- ¹⁶² Կ'ակնարկէ Զօպանեանի արդէն յիշուած ու *Անահիտի* Նոյնքեր-Դեկտեմբեր 1930ի թիւին մէջ լոյս տեսած այն քրոնիկին, որուն մէկ կարեւոր մասը (էջ 105-122) նուիրուած էր «Տատրագոմի Հարսը» վիպերգին:
- ¹⁶³ ԱԶՖ, քիւ 2160:
- ¹⁶⁴ Հ. Սիմէոն Վրդ. Երեմեան (1871-1938)՝ Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան անդամ, գրականագէտ:
- ¹⁶⁵ 1926ին Չարեան դիմած էր Թեքեանին՝ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ ուսուցչական պաշտօնի մը ի խնդիր (Վահան Թեքեան, *Նամականի*,

- կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց՝ Աւետիս Գ. Սանճեան, Լոս Անճելըս, Հրատ. Թէքեան Մշակութային Միութեան, 1983, էջ 539): Յայտնի չէ, եթէ ուրիշ փորձ մը կատարած է եւ ակնարկութիւնը այդ մասին է:
- ¹⁶⁶ ԱԶՖ, քիւ 2161: Նամակին աջ կողմը պատռուած է, որուն հետեւանքով առաջին վեց տողերը կորսուած են:
- ¹⁶⁷ ԱԶՖ, քիւ 2162:
- ¹⁶⁸ Կոմսոսիին ինքնութիւնը կարելի չէ պարզել: Արդեօք Զօպանեանի բարեկամ կոմսոսի տղ Վիլնէօ՞վն էր, որ 1919ի Յունուարին ծրագրած էր հայաստան ծնունդով մը կազմակերպել Նիսի մէջ (տե՛ս՝ Մատթէոսեան, «Կոստան Զարեանի եւ Արշակ Զօպանեանի», էջ 385-386):
- ¹⁶⁹ Այսինքն՝ Վահէ Զարեանը:
- ¹⁷⁰ Յովսէփ Փուշման (1877-1966) ամերիկահայ գեղանկարիչ:
- ¹⁷¹ Տե՛ս՝ Երվանդադէ, *Կեանքի Բովից, Առաջին Մաս*, Երեւան, Պետհրատ, 1930: Երկրորդ մասը լոյս տեսած է 1932ին:
- ¹⁷² Կ'ակնարկէ ֆրանսահայ երիտասարդ գրագէտներուն, որոնք այդ շրջանին խմբուած էին *Մենք* հանդէսին շուրջ եւ նախօրօք արդէն քանի մը բախումներ ունեցած Զարեանի ու այլ երէց գրողներու հետ:
- ¹⁷³ Մէկ խօսքով (բարբառային):
- ¹⁷⁴ ԱԶՖ, քիւ 2163:
- ¹⁷⁵ Խօսքը կը վերաբերի երկրորդ մանչ գաւակին՝ ճարտարապետ Արմէն Զարեանին (1914-1994):
- ¹⁷⁶ Կ'ակնարկէ Անդրկովկասի Դաշնակցային Հանրապետութեան կառավարութեան:
- ¹⁷⁷ Թերեւս կ'ակնարկէ այն իրողութեան, որ Խորհրդային Հայաստանի կուսակցական-կառավարական վերնախաւին մէջ վանեցիները զգալի տարր կը հաշուէին (օրինակ՝ Աղասի Խանջեանը):
- ¹⁷⁸ ՀԲԸՄին յանձնուած Ռաֆայէլ Մարկոսեանի անունով կտակը հաստատուած է 1922ին:
- ¹⁷⁹ 1932ին Զարեան փոխադրուած է Միլանօ:
- ¹⁸⁰ *Երեք Երգեր* լոյս տեսած է Փուշմանի մեկենասութեամբ:
- ¹⁸¹ Աւետիս Ահարոնեան (1866-1948) արեւելահայ արձակագիր ու քաղաքական գործիչ:
- ¹⁸² Դաւադրութիւն (ֆր.):

KOSTAN ZARIAN'S LETTERS TO ARSHAG TCHOBANIAN (1922-1931)
(Summary)

VARTAN MATIOSSIAN
varnyl@yahoo.com

We published the letters exchanged by writers Kostan Zarian (1885-1969) and Arshag Tchobanian (1872-1954) in 1917-1919, 1945-1946, and 1950 in the *Haigazian Armenological Review* of 2007. At the time we made reference to Zarian's letters from 1922-1931, kept in the Museum of Literature and Art "Eghishe Charents" of Erevan. Herewith, we publish those letters in their entirety (33 letters and messages). The whereabouts of Tchobanian's answers is so far unknown.

A few letters (numbers XI, XIV, XIX, XX, and XXXII) were first published in Soviet Armenian orthography by Gohar Aznavourian in 1975. That publication had various abridgements and misreadings and did not contain footnotes of any kind. We republish those letters, as well as letters XIV, XV, and XVII, which we previously published in 1993, with textual corrections.

This series of letters presents several periods of Zarian's life. In 1922 the writer was living in Constantinople, and his letters give some insights into the efforts to start a new cultural and literary movement. After leaving Armenia (1922-1924), he went to Paris, where he launched the international literary journal *La Tour de Babel* (one issue, 1925), and tried to secure Tchobanian's collaboration. From 1929-1931 Zarian was in talks with the French-Armenian writer for the publication of the Armenian original of his poem "Three Songs." The letters give important details about the Italian translation of that poem, first published in 1916. He also makes remarks about the relaunching of Tchobanian's literary journal, *Anahit*, in 1929, Armenian literary and political life, the situation in Soviet Armenia, and his private life, especially his efforts to secure a college scholarship for his elder son.

